ԱՏԵՂԾԱԿԵՐՊ

#1(79)
2023

գրական
ամսագիր

Ամենաթանկը

antares@antares.am
www.antares.am

+374 10 58 10 59

Կարդալը վնասակար է տգիտությանը

Երիտասարդ

ԴԱՐԱՆ
ԳՐԱԽԱՆՈՒԹ

Մանվել Մարտիրոսյան

Նոր դարին՝ շրջափակված Ստեփանակերտում

Շրջափակման արդեն 35-րդ օրն էր, երբ Ֆեյսբուքում մեկնարկեց #տեղըԱրցախում ֆլեշմոբը: Երկար մտածում էի, թե հատկապես որ կադրն եմ ուզում վեր հանել արցախյան ճամփորդություններից: Դադիվանքը, Ստեփանակերտի լվացքներով բակերը, բլոջիկներով զարդարված Բարդակի սեղանները, Շուշիի ռեալական դպրոցը, Տողի հին փլատակները, Զոնտիկները, Ազոխի քարանձավը... Բայց հիշեցի, որ ամենամեծ տպավորությունը ստացել էի, երբ մտանք Ստեփանակերտի օդակայանի շենքը: Ընդամենը մի քանի տարի առաջ կառուցված, նոր, փայլուն, գեղեցիկ՝ ասես թևերը սփռած մի արծիվ, որ պատրաստվում է թափ հավաքել ու թռչել: Բայց տպավորիչ էր ոչ թե շենքն ինքնին, այլ երևույթը. կա մի պետություն, որի ժողովուրդն ուզում է հաղորդակցվել աշխարհի հետ, ունի դրա համար նույնիսկ պլպլան մի օդակայան, բայց չի կարողանում: Արծվի թևերը դեռ գետնին են ու չեն պոկվում: Անձնագրային ստուգման կետի «Ելք դեպի քաղաք» գրությունը չեն կարդում այստեղ ժամանող ուղևորները:

Բայց այդ ժամանակ՝ 2020 թվականի արհավիրքից ընդամենը մեկ ամիս առաջ էր, մեզ հաջողվեց կատարել մեր չվերթը: Փոքր, երկտեղանոց օդանավով, որը հանգրվանել էր օդակայանի անգարում: 15 րոպեի կախարդանք էր՝ սլանալ Հունոտի կիրճի ժայռե պատերի միջև, վերևից տեսնել Ստեփնակերտի փողոցներն ու ճախրել Ղազանչեցոցի վրայով, գիտակցել, թե ինչքան փոքր է այս մի բուռ հողը, բայց որքան անսպառ խորություն ունի իր մեջ:

Հիմա, երբ պատրաստում ենք ԵՐԵՎԱՆի այս թողարկումը, այդ բուռ հողն ավելի փոքրացել, սեղմվել, խտացել, ամբողջ Արցախը կարծես կենտրոնացել է Ստեփանակերտի մեջ ու շրջակայքում: Բայց այդ փոքր հողակտորն էլ հանգիստ չեն թողնում: Մենք ուզում էինք ամսագրում խոսել այն մասին, թե ինչպես են, չնայած բոլոր հարվածներին ու վերքերին, մարդիկ ապրում ու կերտում իրենց ապագան, բայց ահա՝ իրենց կյանքն ու ապագան նորից ուզում են իրենց ձեռքից առնել:

Մի խոսքով, այդպես էլ չորոշեցի, թե որն է տեղը Արցախում: Բայց երևի ավելի կարևոր է, որ Արցախը մեր մեջ տեղ ունենա: Այդ դեպքում օդակայանն էլ ի վերջո կսկսի աշխատել, ու դրա անգործության պատմությունը կմնա միայն Նորա Մարտիրոսյանի հրաշալի ֆիլմում:

Ի դեպ, օդակայանների մասին: 1960-ականների վերջում ամերիկյան Սիեթլը գտնվում էր ծայրահեղ ծանր տնտեսական վիճակում: Այն աստիճան, որ քաղաքի ամենախոշոր գործատուն՝ Boeing ընկերությունը, մի քանի տարում կրճատեց շուրջ 60 հազար աշխատող: Եվ 1970-ին Սիեթլի օդակայանի մուտքի մոտ հայտնվեց հետագայում թևավոր դարձած խոսքը. «Սիեթլից մեկնող վերջին մարդը թող անջատի օդակայանի լույսը»:

2023 թվականի սկիզբն է: Ստեփանակերտի օդակայանն առայժմ չի աշխատում իր անմիջական նպատակով, բայց լույսը վառ է մնում, ուրեմն մի օր բոլոր ճանապարհները՝ ցամաքային, օդային, հոգևոր, կբացվեն:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Խառը կանաչի
Ամսվա ամփոփում
Նոր գրքեր, նոր նստավայրեր ու սպասվող իրադարձություններ:

06 Մեծ էկրան
#ՄերԿինոն ԿինոՊարկում
Ֆրունզիկը, Չիգարխանյանը, Շերենցն ու մյուս մեծերը վերադառնում են մեծ էկրան:

08 Միջավայր
Seasons Park. մի այգու պատմություն
Ինչ խանապարհ է անցել սիրված «Բուլվարը» և ինչ ապագա է այգուն սպասում նոր ֆևափաչով ու Seasons անվանմամբ:

ՔԵՅԻՆՔ ՍՏԵՓ

12 Բլոկադա
«Մեր հողը լքելու մտադրություն չկա». շրջափակված Արցախը
Ինչպե՞ս էր Արցախն ապրում շրջափակման մեզ. ստեփանակերտցու փորձն ու Արման Ղահրամանյանի լուսանկարները:

16 Զբոսանք
Երկու օր Ստեփանակերտում
Ինչպե՞ս պլանավորել ֆեր շաբաթ-կիրակին, եթե երկու օրով հայտնվել եք Արցախի Հանրապետության մայրաքաղաքում:

22 Նստավայր
Մի Բարդակ ու մի Ազատ
Ստեփանակերտի ամենահայտնի հավաքատեղիներից մեկը, որը վաղուց շատ ավելին է, քան պարզապես փաբ:

26 Փառատոն
«Պետք է վերածնվենք արվեստի միջոցով». Ստեփանակերտի լուսաբացի փառատոնը
Ինչպես հերպատերազմական Արցախում կայմակերպվեց առաջին մշակութային փառատոնը՝ Sunrise Stepanakert-ը:

28 Հյուրանոց
Պարկ հոթել
Ստեփանակերտի ամենահայտնի հյուրանոցը, որը նախկին վինանոց ու հիվանդանոց է եղել:

30 Ֆոտոպատմություն
Ուրվական թատրոն
Ինչպես Արեգ Բալայանն ու ԱՅԲ դպրոցի ֆոտոհմբակի սաները մեկնեցին Արցախ ու վավերագրեցին տեղի դրամատիկական թատրոնի մշուշոտ ներկան:

36 Կինո
Արծվի պես. «Երբ որ քամին հանդարտվի...»
Սաննի կինոփառատոնում ցուցադրված ֆիլմը՝ Ստեփանակերտի օդակայանի ու Արցախի խակատագրի մասին:

40 Մարդիկ
Էքսպատներ. Արցախին սիրահարվածները
Չորս պատմություն՝ Հայաստանից Արցախ տեղափոխվածների ու այնտեղ իրենց գտած մարդկանց մասին:

44 Օբյեկտիվ
«Ստեփանակերտը հետաքրքիր ռեգեներատիվ հատկություն ունի»
ԵՐԵՎԱՆը գնացել էր լուսանկարիչ Արեգ Բալայանի տուն՝ լսելու իր ու մի ֆիչ նաև իր կնոջ՝ Լուսին Աթաբեկյանի Ստեփանակերտի մասին:

48 Հայացք
Անդադար աշխատող շարժիչ
Ստեփանակերտի բնավորությունը, խարտարապետությունն ու ֆաղաֆաշինական իրավիճակը՝ ըստ խարտարապետ Մանուշակ Սիրսանյանի:

50 Արտադրություն
Պատերազմ ու գինի
ԽՄԷ գինիների համահիմնադիր էմմա Հարությունյանը պատմում է Արցախում գինեգործությամբ զբաղվելու փորձի մասին:

52 Ճահճություն
Թումո
Թումո Ստեփանակերտի սաների ստեղծագործական նախագիծը:

56 Խորհրդանիշ
Մենք ենք մեր սարերը
Ինչպես կերտվեց հոչակավոր արձանը, որը դարձավ Արցախի խորհրդանիշը:

60 Կադրերի բաժին
Ստեփանակերտը պատերազմի ժամանակ, 1993 թ.
Մի դրվագ Ստեփանակերտի դրամատիկ պատմությունից:

Շապիկ՝
Անահիտ Ըռքոյան

ԵՐԵՎԱՆ #1(79) | 2023

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Էլեն Բաբայան, Կարինա Տերտերյան, Էմմա Հարությունյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Արեգ Բալայան, Բիայնա Մահարի, Դավիթ Ղահրամանյան, Սևակ Ասրյան, Վալենտինա Պալատուրյան, Թումո Ստեփանակերտ, ԱՅԲ դպրոց, gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

© 2011-2023 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 01.02.2023

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

Մոպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ազակցությամբ

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

ՎԻՇԱՊՈՒԲԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Ինչ անել

Բի-2. մեծ մենահամերգ

Մարտի 17, Մարզահամերգային համալիր

Վերջին տասնամյակների կարևորագույն ռուսական ռոք համույթի երկրորդ երևանյան ելույթը պիտի տեղի ունենար դեռ անցյալ աշնանը, բայց հայտնի պատճառներով հետաձգվեց: Նոր ամսաթիվը մարտի 17-ն է: Ծրագրում հին հիթերն են ու նոր դուրս եկած ալբոմի նոր երգերը:

«Ինիշերինի բանշիները»

Հունվարի 26-ից, KinoPark կինոթատրոն

Նախաօսկարյան շրջանի ամենաշատ քննարկված ժապավեններից մեկը հասնում է երևանյան մեծ էկրաններին: Իռլանդացի ռեժիսոր Մարտին Մըքդոնաային հաստատ ծանոթ եք իր նախորդ՝ «Երեք ցուցանակ Էբինգի սահմանին, Միսուրի» դրամայով: Այս տարի էլ Մըքդոնան կլինի օսկարյան մրցավազքի կենտրոնում, քանի որ «Ինիշերինի բանշիները» գեղեցիկ, տխուր ու պոետիկ դրամա է՝ հարաբերություններն իրար հետ պարզող փոքրիկ իռլանդական կղզյակում ապրող երկու վաղեմի ընկերների մասին: Քոլին Ֆարելն ու Բրենդան Գլիսոնն անզուգական են:



Oxxxymiron

Փետրվարի 26, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

Ռուսական ռեփի լեգենդ Oxxxymiron-ը մի քանի տարվա ընդմիջումից հետո առաջին անգամ համաշխարհային հյուրախաղերի է մեկնում: 6 մայրցամաքներն ընդգրկող տուրի մեջ տեղ է գտել նաև Երևանը: Խոստանում են, որ Միրոնը կներկայացնի ամենավերջին՝ «Красота и Уродство» ալբոմը, ինչպես նաև արդեն դասական դարձած գործերը:

Ռուսլան Բելի, «Դեռ»

Մարտի 18, Սունդուկյանի անվան թատրոն

Ռուսական սթենդափի առաջատարներից մեկը նույնպես երկրորդ անգամ է լինելու Երևանում: Նոր ծրագրի նյութը Բելին գրել է վերջին ամիսների ընթացքում՝ աշխարհում տեղի ունեցող ցնցող իրադարձությունների ֆոնին:

Համացանց

PAST

PAST photo archive

Լուսանկարիչ Վահան Ստեփանյանը շուրջ երկու տասնամյակ աշխարհով մեկ հավաքել է հայերի հին լուսանկարներ: Այժմ նա փորձում է այդ ամենի միջոցով ներկայացնել լուսանկարներում պատկերված մարդկանց կյանքերն ու ժամանակները: Հավաքածուին կարելի է ծանոթանալ Ինստագրամում:

instagram.com/past

ZEAL POSTER ROOM

Երևանի ամենահայտնի նկարազարդողներից մեկը և ԵՐԵՎԱՆԻ բազմակի շապիկահար Վիլլամ Կարապետյանի հոչակավոր պաստառներն այժմ հավաքված են մի տեղում: Փնտրեք Ինստագրամում:

instagram.com/zeal_posters

Նոր նստավայրեր

Bastard meatbar, Թամանյան 3/11

Մսի սիրահարների համար նոր հետաքրքիր վայր Կասկադում: Ընդ որում, այստեղ միսը կարելի է ինչպես գնել, այնպես էլ փորձարկել տարատեսակ ուտեստների տեսքով: Սթեյքային տեսականիից բացի մենյուում առանձնանում են խոզի մսով բուրգերն ու տրյուֆելային սոուսով ոսկրածուծը: Խմիչքների մեջ առկա են կոկտեյլներ ու շոթեր:

Set, Սարյան 17

Սրճելու ու նախաճաշելու նոր վայր՝ Կրասնոդարից: Set ցանցի երևանյան կետում առաջարկում են ըմպելիքների մեծ ընտրություն՝ սովորական սուրճ-թեյ-կաթնային կոկտեյլներից մինչև հեղինակային սփեշլթիներ (օրինակ՝ դդմային ռաֆ կարիով): Սուրճի հետ, իհարկե, անհրաժեշտ է փորձել կաթնաշոռով բլիթներից (դասական, բանանով, կակաչի սերմով, կոկոսով), իսկ ավելի շոշափելի նախաճաշի համար՝ բենեդիտկով ու սաղմոնով բլիթը:

Borsch, Մոսկես Ռորենապի 9

Ռուսական միգրացիայի ալիքը նոր հետաքրքրություն առաջացրեց ռուսական ձևաչափերի նկատմամբ: Մասնավորապես, անցյալ տարվա վերջում Kond House-ի ստեղծողները բացեցին Borsch կոնծարան-պելմենոցը: Ինչպես երևում է անվանումից, այստեղ հատուկ ուշադրություն են դարձնում և՛ սննդին (տե՛ս ֆիրմային բորշչը, լոլիկով ձվածեղը, թթվի տեսականին, սալն ու մյուս խորտիկները), և՛ ըմպելիքին. Borsch արժե այցելել թեկուզ միայն ֆիրմային թրմօղիները փորձելու համար՝ խրենովուխա, լիմոնչելլը, հնդկաձավարի, լոլիկի չրի, ելակով, բալով, լորամրգով, պերցովկա, տարեկանի հացի:

Նոր գրքեր

Իսաբել Այլենդե, «Ոգիների տունը», Ջանգակ

20-րդ դարի լատինաամերիկյան գրականության կարևորագույն գործերից մեկը վերջապես թարգմանվել է հայերեն: Իսաբել Այլենդեի մանկական հիշողություններից ծնված «Ոգիների տունը» վեպը վառ, հարավամերիկյան գույներով պատկերում է Տրուեբա ընտանիքի պատմությունը՝ լի զվարճալի դրվագներով ու դրամատիկ զարգացումներով: Այս ընտանիքի պատմության մեջ արտացոլվում է նաև մի ամբողջ երկրի՝ Չիլիի մի քանի տասնամյակների պատմությունը՝ մշակութային ու քաղաքական իր ողջ հարստությամբ և հակասականությամբ: Կարևոր նշում. գիրքն արժե կարդալ՝ նույնիսկ եթե տեսել եք Մերիլ Սթրիփի ու Ջերեմի Այրոնսի մասնակցությամբ՝ 1993 թվականի ոչ շատ հաջող էկրանավորումը:



Մոիգրան Վարագ, «Լեռնային կղզի»

Armenian Geographic արշավային համայնքի հիմնադիր Տիգրան Վարագի այս աշխատությունը, ըստ էության, Հայկական լեռնաշխարհի և Հայաստանի լեռների մասին հանրագիտարան է, որը ստեղծվել է ArmGeo-ի 10-ամյա գործունեության ընթացքում իրականացրած վերելքների արդյունքում: Գիրքը երկլեզու է՝ հայերեն, անգլերեն և բաղկացած է 300 էջից: Գրքում տրվում է բոլոր լեռների մասին ճշգրիտ տեղեկություններ՝ նրանց կոորդինատների և դիրքի մասին, որոնք ուղեկցվում են լուսանկարներով և քարտեզներով: Բոլոր լուսանկարները, որոնք տեղ են գտել գրքում, կատարվել են արշավների ընթացքում: «Լեռնային կղզին» կարելի է պատվիրել ArmGeo-ի ֆեյսբուքյան էջից:

«Սիրային նամակներ», «Վերնապուն»

Էպիստոլյար ժանրի այս տեքստերը, որոնք բնորոշ էին հատկապես նախորդ դարերին, գրեթե մոռացվել են մեր օրերում: Նախկինում նամակները ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց էին, այլև խոստովանական տեքստեր, որոնք արտահայտել են հեղինակների անկեղծ մտքերն ու ցանկությունները: Գիրքը ներառում է Վահան Տերյանի, Ավետիքի Իսահակյանի, Ժան Կոկտոյի, Մարինա Ցվետաևայի, Էռնեստ Հեմինգուեյի, Տոնինո Գուերայի ու շատ ուրիշների սիրային նամակները:

«Դեպի վեր», «Բունկինիսպ»

Հայ գրականությունում ֆանտաստիկ ժանրը շատ քիչ է ներկայացված, ինչի պատճառով այս նոր ժողովածուն է՛լ ավելի կարևոր է դառնում: Գրքում տեղ են գտել ժամանակակից հայ ֆանտաստ գրողների՝ «Արմկոն» գրական մրցույթին («Դեպի վեր» խորագրով) ներկայացված լավագույն ստեղծագործությունները: Հեռավոր ապագայից մինչև առասպելական անցյալ, պոստապոկալիպտիկ Սևանից մինչև բակեմոնոներով ճապոնական անտառներ՝ այս ստեղծագործությունները կոգեշնչեն ձեզ մտածել այլ աշխարհների, այլընտրանքային անցյալի և հրաշալիքներով ու մարտահրավերներով լի ապագայի մասին:

#ՄերԿինոն ԿինոՊարկում

Փետրվարին ԿինոՊարկ կինոթատրոնում մեկնարկում է «Մեր կինոն» արշավը, որի շրջանակում նորից մեծ էկրան կբարձրանան հայ կինոյի հինգ կարևոր նմուշներ: ԵՐԵՎԱՆԸ արշավի կազմակերպիչներից պարզել է, թե որն է նախագծի գլխավոր նպատակը և ինչու արժե դիտել սիրված ժապավենները կինոթատրոնում:

Մենք ենք, մեր կինոն

Ալլա Թումանյանի կոշիկի կրունկը խրվում է տրամվայի երկաթգծի մեջ և նա հրաշքով փրկվում է վրա հասնող տրամվայից... Ջարմացած Արմեն Ջիգարխանյանը գյուղից ժամանած «բարեկամների» հետ երգում է «Քամին զանա»-ն... Հանուն սիրո և ընկերության ամեն ինչի պատրաստ հայ տղամարդիկ Սանահինի վանքի ֆոնին քոչարի են պարում... Ոչ մի նոր բան՝ մանկուց բոլորիս հայտնի տեսարաններ են Էդմոն Քեոսայանի «Տղամարդիկ» կատակերգությունից: Բայց մի կարևոր նրբություն. այս ամենն այժմ հնարավոր է դիտել մեծ էկրանի վրա՝ հարմարավետ փափուկ բազկաթոռներին նստած:
Փետրվարի 8-ին ԿինոՊարկում մեկնարկեց «Մեր կինոն» արշավը և, ահա, «Տղամարդիկ» վերադառնում են կինովարձույթ: Մեկ շաբաթ շարունակ այն կարելի է դիտել ԿինոՊարկում՝ հենց նոր լույս աշխարհ եկած հոլիվուդյան բլոքբասթերների կողքին: Հաջորդ շաբաթ հերթափոխը կհանձնվի Հենրիկ Մալյանի «Կտոր մը երկինք» դրամային, հետո կլինեն «Մենք ենք մեր սարերը», «Մեր մանկության տանգոն» և «Խոշոր շահումը»:

Կինո՝ հայերի մասին

Առաջանում է տրամաբանական հարց. ինչո՞ւ դիտել այս դասական, սիրված ժապավենները կինոթատրոնում: ԿինոՊարկում բացատրում են շատ պարզ. ցանկացած ֆիլմ պետք է դիտել մեծ էկրանին: «Այդպես է միայն հնարավոր ընկղմվել ֆիլմի իրականության մեջ և զգալ այն ամենը, ինչ դերասանները փորձում են փոխանցել,– մանրամասնում է Երևան Մոլի բիզնեսի զարգացման տնօրեն Շուշան Ավագիմյանը,– դա վերաբերում է նաև մեր հին ֆիլմերին, որոնց յուրովի տեղ է հատկացված հայկական արժեքների ձևավորման գործում: Մեր երիտասարդությունը, որը ևս այդ արժեքները կրողն է, հնարավորություն պետք է ունենա այդ ֆիլմերը դիտելու կինոթատրոնում»:
Ինչ վերաբերում է ընտրված ֆիլմերին, ապա գլխավոր սկզբունքը եղել է, որ դրանք հային ու հայի կյանքը տարբեր դրսևորումներով ներկայացնող գործեր լինեն: Նշված բոլոր ֆիլմերում կա հումոր, կենցաղ, ընտանիք, աշխատանքային առօրյա և դրանից բխող խնդիրներ, որոնց լուծման հայի մոտեցումը կհասկանա միայն հայը:

Ժամանակակից մոտեցում

Եվ իհարկե, ժամանակակից վարձույթի համար անհրաժեշտ են առաջխաղացման ժամանակակից գործիքներ: Հատուկ այս արշավի համար ԿինոՊարկի գործընկեր Դոպինգ կրեատիվ ընկերությունը մշակել է ընտրված ֆիլմերի մատուցման թարմացված ձևաչափ՝ ստեղծելով «Տղամարդիկ», «Կտոր մը երկինք» և «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմերի նոր ազդագրեր ու թրեյլերներ (վերջինս խորհրդային տարիներին ընդհանրապես չի կիրառվել): Թեպետ դրանք ոչ այնքան բուն գովազդի միջոցներ են, այլ պարզապես տարրեր, որոնք պարտադիր պետք է ունենա ցանկացած ժամանակակից ֆիլմ: «Ուշադրություն դարձնելով նորաստեղծ վիզուալներին՝ կարելի է հասկանալ, որ դրանք հնի ու նորի համախումբ են. հին հայկական ֆիլմերը կարծես ժամանակի միջով անցած՝ փոխակերպվել և ներկայանում են ժամանակակից թրենդերին տիպիկ ձևաչափով,– նշում է Շուշան Ավագիմյանը:– Կարևոր է նշել, որ դրանից չի փոխվում նրանց էությունը՝ մենք նորից վերհիշելու ենք Թորիկի ու Գրիգոր աղայի վեճերը կամ չորս ընկերոջ զվարճալի ու պատահականություններով լի արկածներն աղջկա սիրտը գրավելու ճանապարհին: Պարզապես այդ ամենի ներկայացումը ներդաշնակորեն խառնված է նորագույն տեխնոլոգիաների և դրանց գործիքների հետ»:

Շարունակելի՞

Պարզ է, որ ուշադրության արժանի հայկական ֆիլմերի թիվը շատ ավելին է, քան այս հինգը և գուցե հաջողության դեպքում հետագայում ԿինոՊարկի մեծ էկրաններին՝ նորանոր բլոքբասթերների կողքին կհայտնվեն նաև ա՛յլ հայրենական գլուխգործոցներ: Կինոթատրոնի ղեկավարությունն առայժմ չի բացում բոլոր փակագծերը, միայն նշում է, որ ԿինոՊարկը բազմապրոֆիլ կինոթատրոն է, ինչը նշանակում է, որ այն համատեղում է ինչպես արդիականությունը, այնպես էլ ավանդույթները, վինտաժն ու նորարարությունը, մշակույթը և թվային դարաշրջանը: Համենայն դեպս, սա հաստատ ֆիլմի վերջը չէ:

Ավելի հարմար թվային գործիքներ

Երևան Մոլի թարմացված հավելվածը հնարավորություն կտա կինոսերներին ավելի հարմար դիզայնով ավելի արագ գնել ցանկալի ֆիլմի տոմս՝ ստանալով շուկայի համար նորություն համարվող պրոմո կոդեր հետագա այցելությունների համար: Բացի այդ, Երևան Մոլը ներկայացնում է բոլորովին նոր փորձառություն՝ 5 յուրօրինակ դիզայնով թվային նվեր քարտեր, որոնք կարելի է ձեռք բերել անմիջապես հավելվածից: Ի դեպ, քարտերից մեկում պատկերված է հայկական կինոյի անփոխարինելի աստղ Մհեր Մկրտչյանը՝ «Խոշոր շահում» ֆիլմի դրվագում, ուստի արշավի շրջանակներում հնարավոր կլինի նաև նվիրել «Ֆրունզի դեմքով» նվեր քարտ:

Yerevan Mall
Google Play
App Store
#Մկրկինոն ԿինոՊարկում
ՍՏԱՑԻ՛Ր ՊՐՈՄՈ ԿՈԴ ՀԻՄԱ

Արեգ Դալիթյան

Seasons Park.

ՄԻ ԱՅԳՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դեռ 1926-ից Ալեքսանդր Թամանյանը մայրաքաղաքին «կանաչ թոքեր» նվիրելու պլաններ ուներ: Երբ հին երևանաբնակների հետ ես զրուցում, շատերն են ասում, որ քաղաքում նախընտրում են Երևանի 2800-ամյակի այգին, դեռահասների շրջանում սիրված են Անգլիական ու Սիրահարների այգիները: Իսկ հանգստի, ժամանցի, երեխաների զվարճանքի համար երևանցիները հիմա առավել նախընտրում են Գլխավոր պողոտայի՝ Սարյանի ու Մաշտոցի միջանկյալ հատվածում տեղավորված Seasons այգին: Բայց ինչպե՞ս է ստեղծվել ու հասել մեզ մեր այս «կանաչ ժառանգությունը»:

2021 թվականի ամռանը Գլխավոր պողոտայի՝ Մաշտոցի ու Սարյանի միջանկյալ հատվածում տեղավորված այգին, որը ժամանակին տեղաբնակների կողմից կոչվել է «Բուլվար» կամ «Մալիբու» (ժամանակին տարածքում գործող համանուն սրճարանի անունով), վերագործարկվեց «Երեմյան Փրոջեքթս» ընկերության կողմից: Այգին այժմ կոչվում է Seasons, վերափոխվել է դրա արտաքին տեսքը, տարածքում բացվել են ժամանցի նոր վայրեր ու անցկացվել մի շարք փառատոներ ու համերգներ: Այգու այցեքարտն է դարձել շատրվանը, իսկ ինքը՝ այգին, Երևանի կենտրոնի ամենաաշխույժ հատվածներից մեկն է: Ահա, թե ինչպես էր զարգանում այգու պատմությունը:

1926-1974. Օղակաձև այգու քույր այգին

1926-ից Ալեքսանդր Թամանյանի նախագծած մի շարք գլխավոր հատակագծերում այգիները մշտապես իրենց կարևոր տեղն են ունեցել: Բացի Օղակաձև այգուց, գլխավոր պողոտայի այգին ևս պետք է լիներ նոր ստեղծվող, վերակառուցվող, Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի «կանաչ թոքերը»: Ըստ Թամանյանի նախագծի՝ Երևանը պետք է լիներ արևային քաղաք, այգիներն էլ՝ ծաղիկներով ու կանաչով ողողված: Ինչպես Օղակաձև այգին, այնպես էլ գլխավոր պողոտայինը գծային առումով միաժամանակ պետք է լիներ և՛ հանգստի գոտի, և՛ շրջակա միջավայրի վրա բարենպաստ ազդեցություն ունեցող զբոսայգի: Մտածել էր նաև հետիոտնի մասին. պետք է լիներ հաղորդակցման ուղի:

1974-1990. Արմեն Զարյանի նախագիծը

«Երևաննախագիծ» ինստիտուտի տնօրեն Սուրեն Օհանյանը պատմում է՝ մինչև 1974 թվականը Արամի-Բուզանդ փողոցների անկյունում կային մեկ-երկու հարկանի բնակելի տներ՝ կառուցապատված նախախորհրդային ցարական Ռուսաստանի ժամանակներում: Դրանց մեծ մասը համարվում էր պատմամշակութային հուշարձան: 1974-ից սկսվեց այգու հիմնական կառուցապատումը: Սարյան փողոցի բնակիչներից մեկն այսպես է հիշում. «Այգին 70-ականներից սկսեցին կառուցել: Մի օր տրակտորների ձայնից





↑ *Seasons Park-ի նոր տոնածառը*

← *Այգին 1970-80-ականներին և այնտեղ գործող առաջին սրճարանը*

արթնացանք, տեսանք, որ տարածքը լրիվ քանդում են: 10 օրվա մեջ հավասարացրին ամեն ինչ, հետո խոտեր ցանեցին, ծառեր տնկեցին, հետագայում արդեն կանաչապատում արեցին, շատրվանները սարքեցին: Ամառը միշտ մարդաշատ էր, մարդիկ իջնում էին, քայլում էին, խաղահրապարակ կար, երեխեքն էլ խաղում էին: Ամֆիթատրոնի նման հատված էլ կար, էդտեղ էլ համերգներ էին լինում մեկ-մեկ...»: Բացումը տեղի է ունեցել 1977-ին: Բետոնե շատրվանների հեղինակն Արմեն Զարյանն էր: Կառուցապատվել էր Սարյան փողոցից մինչև Միսաք Մանուշյանի անվան (նախկին Մաշտոցի) պուրակը: Զարյանի նախագծի հիմնական խնդիրն էր շրջակա միջավայրի միկրոկլիմայի բարելավման համար ստեղծել ջրային ու բուսական տարածք: Ի վերջո, խնդիրը լուծված էր. այգին կանաչապատ էր, շատրվաններով հարուստ, հանգստի գոտին ապահովված էր:

1990-2009

Անկախության առաջին տարիներին այգու վիճակը վատթարացավ: «Տարիների ընթացքում այգու հենապատերը, ծառուղիները, եզրաքարերը, սալահատակը տեխնիկապես ենթարկվել էին կոռոզիայի: Այնտեղ պահպանված հատված չէր մնացել: Շատրվանները հսկայական կառույցներ էին, և երբ քանդում էին, դրա տակ բաց տարածություն կար. շատրվանները պոմպակայանների համար էին. քանդվել էին և տեխնիկապես հնարավոր չէր պահպանել: Իսկ նույնը կառուցել բացարձակ անիմաստ էր, քանի որ այդ քանակի ջուր ու էլեկտրաէներգիա ապահովելը չափազանց ծախսատար էր ու ոչ ձեռնտու:

Ի վերջո, եկավ ժամանակ, երբ քաղաքային իշխանությունները որոշեցին վերակառուցել այգին այլ կերպ: Աշխատանքները սկսվեցին 2009-ից»,– հիշեց «Երևաննախագիծ» ինստիտուտի տնօրենը:

2009-2021. Երևանի առաջին հետիոտն շատրվանը կամ չոր շատրվանը

2008-2009-ին այգու բարեկարգման համար կառավարության որոշմամբ մրցույթ հայտարարվեց: Տարածքը կառուցապատման իրավունքով ձեռք բերեց «Տաշիր գրուպ» ընկերությունը՝ դառնալով հողի ժամանակավոր օգտագործող: Ըստ իրենց առաջարկի՝ նախագիծը մշակեց «Երևաննախագիծ» ընկերությունը: Խնդիր դրվեց իրատեսական մոտեցում ցուցաբերել և վերականգնել, արդիականացնել այգու աշխատանքը, թարմացնել գործող հանրային սննդի օբյեկտներն ու սրճարանները: «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, հաշվի առնելով նախկինում արվածը, որը ժամանակի մեջ հիանալի այգեպարկային համալիր էր դարձել, որոշակի հատվածներ պահպանեց ու նոր լուծումներով հագեցրեց տարածքը: Արդյունքում զբոսայգում տնկվեց մոտ 10 հազար տնկի: Բարեկարգման գլխավոր շեշտադրումը եռաչափ պրոեկցիայով ցայտող շատրվանների անսամբլն է՝ 600 ջրային շիթ, մինչև 90 մետր բարձրությամբ և բարդ տեխնիկական շոուներ ու հնարքներ ստեղծելու հնարավորություն: Այգում մեզ հանդիպած մի կոնդեցի հիշում է, որ բոլորովին վերջերս այգին գրեթե լքված վիճակում էր. «Հիշում եմ՝ մի շրջան կար, որ տան գյուղմթերքն իջնում ու էդտեղից էինք առնում: Հետո տարածքն աղբավայրի վերածվեց: Դե մեր միակ զբոսանքի, զվարճանքի ու հանգստի վայրն էլ հենց էս այգին էր: Երբ իմացանք՝ մարդավայել այգի են դարձնելու, շատ ուրախացանք: Արդյունքը գերազանցեց սպասելիքները: Կանաչ, Երևանին վայել եզակի վայրերից մեկն է»:

2021-ից մեր օրեր

2021 թվականի մայիսից Մաշտոց 15/5 հասցեում գտնվող Seasons ռեստորանային համալիրն ու այգին անցան «Երեմյան Փրոջեքթս» ընկերության կառավարման ներքո, այգին էլ կոչվեց Seasons: Ընկերությունը պահպանել է այգու ու քաղաքի ճարտարապետական դիմագիծը, զբաղվում է կանաչ տարածքների և ընդհանուր այգու խնամքով ու մաքրությամբ: Ամբողջ համալիրն այժմ գործում է «Բոլոր եղանակները ձեզ համար» կարգախոսին համապատասխան: «Երեմյան Փրոջեքթսը» ամբողջ տարվա ընթացքում բոլոր եղանակներին բնորոշ միջոցառումներ և նախագծեր է իրականացնում այգում: Ամռանը գործում են գերժամանակակից, միջազգային լավագույն տեխնոլոգիաներով հագեցած շատրվանները՝ իրենց լազերային, լուսաձայնային շոուներով, անցկացվում են բազմազան միջոցառումներ և երաժշտական երեկոներ: Ինչպես հավաստիացնում են ընկերությունում, տարվա մյուս եղանակներին էլ այգում ուրախ տրամադրությունն ու հետաքրքիր զվարճանքներն անպակաս են լինելու: Բայց այսօր արդեն կարելի է փաստել. Seasons այգու հետաքրքիր լուծումներով շատրվանների, այգու խնամքի, կանաչի գերակայության շնորհիվ է, որ Թամանյանի պլանը գոնե մասամբ կարող ենք կատարված համարել:

Սարինա Մելիքերյան
Արմենպրես, Seasons Park

Հրաչյա Սանդրի

ԲԵՑԻՆՔ ՍՏԵՓ

Այս թողարկումը պատրաստվում էր շրջափակումից առաջ, տպագրվում է շրջափակման ժամանակ, բայց, հուսով ենք, կկարդացվի շրջափակումից հետո: Երբ բոլորս կգնանք Արցախ:

«Մեր հողը լքելու մտադրություն չկա». *շրջափակված Արցախը*

ԵՐԵՎԱՆԻ խնդրանքով Արցախի Հանրային հեռուստաընկերության լրագրող, մայրիկ և արցախցի Լիդիա Սահակյանը պատմել է արդեն 40 օրից ավելի տևող շրջափակման մեջ առօրյա կյանքով ապրելու և չհուսահատվելու մասին, իսկ լուսանկարիչ Դավիթ Ղահրամանյանը վավերագրել է շրջափակված Արցախի կյանքը:



Լիդիա Սահակյան

Արդեն չեմ հիշում՝ որքան ժամանակ է փակ Արցախն աշխարհին կապող միակ ճանապարհը: Չեմ էլ ուզում հիշել

«Հաճախ է ինտերնետ կապն անջատվում: Ինչ եք անում այդ ժամանակ». այս հարցի պատասխանին սպասելով մի ամբողջ օր, բայց այդպես էլ պատասխան չգտնելով՝ մնում էր հրապարակել Լիդիա Սահակյանի հետ հարցազրույցը: Ինտերնետ կապն Արցախում անջատվել էր...
2022-ի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը փակ է պահում Արցախն աշխարհին կապող միակ մայրուղին՝ Բերձորի միջանցքը՝ կեղծ բնապահպաններով: 120 հազար մարդ (նրանցից 30 հազարը՝ երեխա), հումանիտար ճգնաժամում գոյատևում է: 1100 քաղաքացի, որոնցից 270-ը՝ անչափահաս, փակված ճանապարհի պատճառով տուն վերադառնալու հնարավորություն չունի: 11 երեխա նորածնային բաժանմունքներում և մանկական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում է, 9 չափահաս՝ վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 4-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում: Իսկ շրջափակման մեջ շարունակում են նոր կյանքեր ծնվել. արդեն 114 երեխա է եկել լույս աշխարհ:
Լիդիան պատմել է այս թվերի հետևում թաքնված մարդկային պատմությունները՝ հայրենի հողի համար բարդ առօրյայով, ապրումներով և մտահոգություններով:

Չեմ հիշում՝ ինչքան ժամանակ են շրջափակման մեջ, անկեղծ ասած՝ հիշել անգամ չեմ ուզում...
Մինչև շրջափակումը առօրյաս վառ երանգներով էր սկսվում: Արթնանում էի ժամը 8:00-ին, բալիկիս հետ ժամանակ անցկացնում, պատրաստվում, ինչպես բոլոր կանայք, ու շտապում հաղորդմանս՝ «Էսթետի» հերթական նկարահանմանը: Արդեն չեմ հիշում՝ որքան ժամանակ է փակ Արցախն աշխարհին կապող միակ ճանապարհը: Չեմ էլ ուզում հիշել: Կանկեղծանամ. միայն օրերս սառը դատել, եղելությունը ճիշտ ընկալել կարողացա: Դադարել եմ վարդագույն ակնոցներով

ապրել: Պատկերացնել չէինք կարող, որ երբևէ նման իրավիճակում կհայտնվեինք:
Առօրյաս փոխվել է, եթե առաջ հնարավոր էր անկարևոր բաների մասին մտածել, ապա հիմա միայն կենցաղի՝ կենսական նշանակության իրերի, սննդամթերքի: Խնամքի պարագաներ, տակդիրներ, կաթնախառնուրդ, ծխախոտ, սուրճ, բանջարեղեն գտնելը ֆանտաստիկայի ժանրից է, և դրանք փնտրել-գտնելու հարցը մեր ամեն օրվա խնդիրն է:
Վերջերս որոշեցի արձակուրդ վերցնել, բայց սխալ էր. աշխատանքի գնալով՝ մտահոգություններս կարողանում էի թաղել աշխատանքային եռուզեռում: Կան մարդիկ, որոնք շարունակում են աշխատանքը՝ չկորցնելով լավատեսությունը:
Ժամանակը փոխում է ամեն ինչ՝ մեզ, մեր ապրելակերպը, մտահորիզոնը: Արցախում էլ այս պահին ձյուն է տեղում: Ասում են՝ ձյունը մաքրելու հատկություն ունի, կանխում է նաև սեզոնային հիվանդությունների տարածումը: Այն կարողացավ մաքրել նաև շատերիս բացասական մտքերը: Իմն էլ: Իսկ հոգուս հանգստությունը գուցե հոգեբանական հասունության ավելի բարձր աստիճանից է:

Դժվարություններն ամենուր են, կարևորը մեր կողմից դրանք հաղթահարելու կարողությունն է

Մտերիմներիս ասում եմ՝ դուրս գան տնից, քայլեն, երկխոսեն իրենք իրենց հետ: Չգիտեմ՝ ինչ կփոխվի տարիներ անց, ինչպես կդասավորվի իմ կյանքը, բայց ես ապրում եմ այս օրով: Ամեն տեղ էլ կան դժվարություններ, ուղղակի պետք է դրանք հաղթահարելու կարողություն ունենալ: Ես հավատում եմ, որ միասին կարող ենք այս փորձությունն էլ հաղթահարել...
Վերջին երկու հաղորդումներս նկարել եմ շրջափակման մեջ: Զարմացա, որ հյուրերն ընդունեցին առաջարկս: Երկուսն էլ ուժեղ աղջիկներ էին: Երկուսն էլ տրամադրություն ու ուժ բերեցին իրենց հետ: Դրական լիցքեր էին հորդում իրենցից ու փոխանցվում էին ինձ: Զարմանում եմ արցախցիների այդ տեսակով:
Ընդհանրապես, տեսախցիկն իմ լավ ընկերն է: Տեսախցիկին ընկերակցելիս հանգստանում և լիցքաթափվում եմ: Կարծում էի, որ հանրությունը վատ կարձագանքեր շրջափակման մեջ նկարահանված հաղորդումներին: Վախենում էի արձագանքից, սպասում էի, որ մարդիկ կքննադատեն, բայց զարմացա հակառակ արդյունքից:
Վերջին հյուրս թխվածքաբլիթներ պատրաստող մի կին էր: Ձվի, շաքարավազի պակաս կա, բայց չգիտեմ որտեղից գտնում ու շարունակում էր գործունեությունը: Նրա ուժն էլ կարծես ինձ է փոխանցվել: Չենք դադարում ապրել, ստեղծել ու ստեղծագործել...
Նկարահանումներս չէի դադարեցրել, բայց ստիպված էի անցնել արձակուրդի. հաղորդմանս բնույթը թույլ չտվեց

Նույնիսկ թշնամուն չեմ ցանկանա այս օրերն ապրել, որոնք ապրում ենք ես ու արցախահայությունը

շարունակել: Բանախոսները ևս ցանկություն չունեին զրուցելու, հատկապես խցիկի առաջ և հատկապես իմ հաղորդման թեմատիկայով: Ի զարմանս ինձ՝ կային համառներ, որ այնուամենայնիվ փորձեցին դրական լիցքեր փոխանցել տեսախցիկի հակառակ կողմ:

Սպասում էինք Ամանորի հրաշքին, բայց հրաշքը չեկավ

Ամեն Նոր տարի բարեկամներով մեր տանն ենք հավաքվում: Այս տարի մեզ չհաջողվեց պահել ավանդույթը: Ամուսնուս մայրն ու քույրը Երևանում են մնացել: Տեսակապով հետները խոսեցինք ու Նոր տարին ուրախ դիմավորեցինք, որ բալիկս ուրախանար: Հույսով լցված սպասում էինք, որ Նոր տարվա հրաշքն ամեն ինչ կհարթի, բայց սխալվեցինք:

Մունք տյուրուր օնք

Զգալի դրական մարդկային փոփոխություն եմ նկատում արցախցիների մոտ: Բոլորս համախմբված ենք: Ֆեյսբուքյան շատ էջեր են ստեղծվել իրար օգնելու համար: Էջերից մեկում էլ՝ «Մունք տյուրոր օնք»-ում (*նշանակում է «մենք իրար ունենք»– խմբ.*), մի կին երեխայի համար խնձոր էր փնտրում: Մեկ ուրիշն էլ օգնելու համար երեք ձվով երեք խնձոր փոխանակեց:

Սկսել եմ գնահատել մանրուքները, գնահատել այն ջերմությունը որ տալիս են մեր հարազատները, մտերիմները, սկսել եմ գնահատել նույնիսկ սննդի հետ կապված մանրուքները: Առաջ խնայողաբար չէինք օգտագործում սնունդը, իսկ հիմա սկսել եմ նույնիսկ արժևորել: Պետք է միշտ մտածել, որ ապրում ենք այնպիսի ժամանակներում, որ պետք է պատրաստ լինել ամենավատին:

Կտրոններն ու սուրճը

Հատկապես հուսահատեցնող էր կտրոնային համակարգին անցումը: 21-րդ դարում անհավատալի է այս երևույթը... Թեև հասկանում եմ, որ արդեն անհրաժեշտություն էր, որովհետև սննդի պակասից շատ մարդ է տուժում: Կան մարդիկ, որոնք ազատ ժամանակ ունեն ժամերով հերթ կանգնելու համար, կա նաև մի մաս՝ ինձ պես փոքր երեխայի հետ տանը, չի կարող դուրս գալ և ժամերով սպասել, ուստի զրկում է իրեն իր հասանելիքից:

Իմ տանը բծախնդիր են և՛ բալիկս, և՛ ամուսինս: Հիմա, փառք Աստծո, ունեմ մնացած ուտելիք, բայց ժամանակի հետ երբ դրանք էլ սպառեմ, չգիտեմ, թե ինչ ենք անելու: Հիմա պահուստով եմ բավարարում մեր կարիքները: Մեր արցախցիները շատ բարի մարդիկ են, ես վստահ եմ, որ եթե որևէ մեկին խնդրեմ, որ մեզ մի տուփ սուրճ տա, իրենք կտան: Սուրճը մեր տանը պարտադիր արարողակարգ է: Եթե տղամարդկանց ծխախոտը չի հերիքում, ապա կանանց՝ սուրճը: Լավ է, երեք տուփ գնել ու խնայողաբար օգտագործում եմ, բայց չգիտեմ, որ վերջանա, ինչ եմ անելու:

40 օր անց. ամենուր հերթեր

Մենք և՛ հոսանքազրկված ենք, և՛ առանց գազի ենք: Ավելի ճիշտ, պարբերաբար միացնում են, բայց այդ անորոշությունն ավելի է զայրացնում: Ջգալիորեն պակասել են երթուղայինները: Մեքենաները ևս սակավաթիվ են: Քաղաքը մեռած է: Մարդիկ հիմնականում ոտքով են շրջում: Կուտակումներ կան քաղաքի որոշակի հատվածներում, հերթերն ամենուր են: Տնից դուրս չեմ գալիս, որ հերթերը չտեսնեմ: Ամեն անգամ տնից դուրս գալիս հերթերը տեսնելով՝ սթրեսի եմ ենթարկվում:

Բոլորս բոլորով ապրում ենք, այլ տարբերակ չունենք

Որպես մայր եմ նաև դիտարկում. նույնիսկ թշնամուն չեմ ցանկանա այս օրերն ապրել, որոնք ապրում ենք ես ու արցախահայությունը: Չեմ ուզում, որ որևէ մեկը հայտնվի այս շրջափակված իրավիճակում:

Այն, որ Արցախի մեր հողը լքելու մտադրություն չկա, հստակ է: Արցախը թողնելով՝ ոչ մեկիս կյանքը հեշտ չի դառնալու: Եղած դժվարությունները հենց մեր հողում պիտի հաղթահարենք: Յուրաքանչյուրս էլ մեր մեջ գիտենք՝ այս դժվարությունն էլ կհաղթահարենք:

Նարինա Մերուքերյան
Դավիթ Նահրամանյան

ԵՐԿՈՒ ՕՐ ՍՏԵՓԱՆԱ-ԿԵՐՏՈՒՄ

Բոլոր ճանապարհները վաղ թե ուշ կբացվեն ու մենք նորից կկարողանանք ճամփորդել Արցախ: Ահա, թե ինչ կարելի է անել, եթե մի արևոտ օր հայտնվել եք Ստեփանակերտում և ունեք 48 ժամ:



Արևի քաղաքը

Երբ վերջապես որոշեք ուղևորվել դեպի Արցախ, անվերջ թվացող ճանապարհը ձեզ կտանի Վայոց ձորի անտառներով և, ի վերջո, կհասցնի Սյունիքի դարպասներին: Պարտադիր կանգ կառնեք, կշնչեք Զանգեզուրի օդն ու նոր կշարունակեք ճանապարհը. քիչ անց սկսվելու է անցակետերի շարանը:

Ռուս խաղաղապահների ու թշնամու լեզվով «Շուշա» գրվածքը քոռ դանակով կբացեն վերջին տարիներին ձեռք բերված հոգեբանական տրավմաները և գուցե դա ձեզ հետ համոզի Արցախ գալու գաղափարից, բայց վստահ եղեք, վերջին՝ արդեն արցախյան անցակետում ձեզ կողջունեն հարազատ դեմքեր, մի քիչ մտահոգ, բայց հյուրընկալ: Իսկ մի քանի կիլոմետր այն կողմ ձեր առաջ կբացվի իրեն շրջապատող սարերի ու բլուրների գրկում արևի շողերի մեջ ողողված Ստեփանակերտը՝ զրոյացնելով բոլոր կասկածներն ու վախերը և վերականգնելով սրտի բնականոն աշխատանքը:

Այդ զգացողությունը կամրապնդվի, երբ մտնեք քաղաք, տեսնեք մարդկանց անխափան կյանքի ռիթմը: Ստեփի մարդիկ արթնանում են շատ շուտ. շատ անելիք կա մինչ ժամը մեկը՝ «օբեդի» հստակ ամրագրված ժամը, բայց այդ մասին ավելի ուշ:

Հենց Ստեփանակերտ մտնելուն պես ձեզ կդիմավորեն «Դեդոն ու Բաբոն»: «Մենք ենք մեր սարերը», նույն «Պապիկ-տատիկի» բլուրը կանգ առնելու լավագույն տեղն է: Մուգ կարմիր տուֆից հուշարձանը խորհրդանշում է արցախցիների և իրենց հայրենի հողի միջև եղած ամուր կապը: Քանի որ այն պատվանդան չունի, տպավորություն է, թե հուշարձանը շարունակվում է հողի տակ: Ամուսինների ջերմ հայացքի տակ շարունակեք ձեր ճանապարհը մինչև «Կոլցեվոյ», որտեղից հետո հաջորդ կանգառը շուկան է:

Շուկան

Տեղացիներից շատերն ասում են, որ քաղաքի իրական կենտրոնն այստեղ է: Վաղ առավոտից հենց դարպասների առջև տեղադրված սեղաններին կանայք թխում են արցախյան հայտնի ժենգյալով հացը: Ձեր բաժին ժենգյալը ստանալու համար գուցե ստիպված լինեք մի փոքր հերթ կանգնել, բայց դա Ստեփանակերտի կյանքը զգալու պարտադիր պայմաններից է:

Մուտքի ձախ կողմի վաճառասեղանից երիտասարդ տղան տուփերից մեկի մեջից կհանի ու կառաջարկի նուռ, մինչդեռ մյուս կողմում կանանցից մեկը հատուկ խնամքով կտորե տոպրակից կհանի և ձեզ կտա թթու վարունգներով, կանաչ լոլիկներով կամ, օրինակ, արցախյան համեղագույն կապարներով լի ապակե տարաներ: Եթե գնումները ձեռքում մի պտույտ էլ անեք շուկայի այլ հատվածներով, կտեսնեք, որ կյանքն այստեղ նույնպես եռում է. հավերը վազվզում են (գուցե վերջին անգամ), վաճառասեղանների հարևանները պատրաստվում են խմել իրենց ավանդական առավոտյան սուրճը կես շոկոլադե կոնֆետով, որը նրանցից յուրաքանչյուրը թղթի մեջ փաթաթել ու պահել է դեռ նախորդ օրվանից:

Կյանքի այս պատկերը երկար կմնա ձեր մտքում, ինչպես նաև տեղական թոնրի հացի համն ու Արցախի տարբեր հատվածներից բերված թարմ մեղրի բույրը: Ժենգյալով հացը կուտեք շուկայից դուրս, մուտքի մոտ կանգնած: Այդպես կհասցնեք հայացք գցել ու նկատել, որ Ստեփանակերտում ոչ ոք ոչ մի տեղ չի շտապում: Մի քանի ժամ անց կնկատեք, որ դուք ինքներդ էլ արդեն այդ հոգեվիճակում եք, և այդպես կմնաք առնվազն մոտակա երկու օրերին:

Ստեփանակերտի շուկան

Գիշերակաց

Ստեփանակերտում մնալու տեղերը շատ են ու բազմաժանր: Օրինակ՝ «Պարկ Հոթելը» ինքն իրենով պատմության գրքից է: Այս գեղեցիկ շինության պատերն առաջին հայացքից չեն հուշում, որ տասնամյակներ առաջ այն զինվորական հոսպիտալ է եղել, իսկ վերջին պատերազմի օրերին նկուղային հարկը լրագրողների գլխավոր շտաբն էր դարձել: Զմոռանաք մտնել հյուրանոցում գտնվող «Մարաշլյան» ստուդիան, գտնել հենց ձեզ սազող արցախյան տարազը և նկարվել դրանով:

Բնականաբար, կան նաև ավանդական «Վալեքս», «Եվրոպա» և «Արմենիա» հյուրանոցները: Երեքն էլ, ի դեպ, գտնվում են քաղաքի կենտրոնական մասերում: Իսկ եթե ավելի առուտենտիկ փորձառության հետևից եք եկել, կարող եք նույնիսկ Airbnb-ով տարբերակ գտնել, բայց չզարմանաք, եթե հյուրընկալը տառերով գրված իր հեռախոսահամարն ուղարկի. պարզապես ուզում է առանց միջնորդի հարցերը լուծել: Տեղական կոլորիտին մաքսիմալ մոտ տարբերակ է «Իոսիֆի հյուրատունը»: Տերը՝ Իոսիֆը, ամբողջ կյանք ալկոհոլային խմիչքների պատրաստումով է զբաղվել, այդ պատճառով էլ ընկերների կողմից ստացել է «Ալխիմիկ» մականունը: Իոսիֆը ոչ միայն ձեզ լավ կընդունի, այլև ձեզ հետաքրքիր պատմություններ կպատմի, վերջում էլ ձեր ձեռքը կդնի իր իսկ պատրաստած թթի օղիով փոքրիկ շիշը՝ դակված իր իսկ պատրաստված հալված մոմանյութով:

↓ *«Մարաշլյան» ֆոտո ստուդիան Պարկ հոթելում*



↑ Գլխավոր հրապարակի հարևանությամբ գտնվող վերջերս վերանորոգված ամֆիթատրոնը

Քաղաքը՝ ոտքով

Երբ տեղավորվեք ու մի լավ հանգստանաք, անպայման ձեզ դուրս հանեք քաղաքային պրոմենադի: Ոնց էլ լինի՝ քայլ առ քայլ կհասնեք «Պիտաչոկին»: Կարող եք տեղի սրճարանից հայտնի պոնչիկները վերցնել ու նստել հենց այգու նստարաններից մեկին: Որոշ ժամանակ հետո կմիանան շատրվանները, իսկ Ստեփան Շահումյանի արձանը (որի անունով էլ կոչվել է «Պիտաչոկի» հրապարակը) խաղաղ հայացքով կշարունակի նայել իր շուրջ վազվզող երեխաներին ու կարծես մի ամբողջ հավերժություն այգու նստարաններին մտորող պապիկներին:

Տեսնելով ցերեկային Վերածննդի հրապարակը՝ բարձրացեք վերև՝ դեպի հարակից փողոցներ: «Ռենեսանսում» կարող եք սրճել մի համով թխվածքով կամ ցանկության դեպքում նույնիսկ ճաշել: Ամենայն հավանականությամբ, երբ ավարտեք այդ կարևոր գործը, արդեն մթնելուն մոտ կլինի, ու կտեսնեք՝ ինչպես է հրապարակը «վերածնվում», քանի որ ամբողջ քաղաքը լցվում է «Պլոշչադ»՝ ավանդական երեկոյան զբոսանքի համար: Եթե նույնիսկ Արցախում առաջին անգամ եք, հավանականությունը շատ մեծ է, որ հրապարակում մի ծանոթ դեմք կտեսնեք: Այդ վայրի կախարդանքը հենց դրանում է. այստեղ միշտ հանդիպում են ծանոթ մարդիկ կամ ձեռք են բերվում նոր ծանոթներ: Օրը եզրափակեք թատրոնի աստիճաններին:

Վահրամ Փափազյանի թատրոնի բեմում ժամանակին ամսական 70-ից ավելի ներկայացում էր ցուցադրվում, իսկ տեղացիներն էլ սիրով գնում ու նայում էին դրանք: Այսօր շենքը վթարային վիճակում է: Տեղացիների խոսքով նոր գեղարվեստական ղեկավար ունի: Հույս ունեն, որ նրա գալով թատրոնը նոր կյանք կստանա: Իսկ այժմ դուք միայն կարող եք զմայլվել շենքի գեղեցիկ առանձնահատկություններով և միգուցե, եթե ձեր բախտը բերի, պահակը կթողի մի քիչ պտտվել նաև շենքի ներսում:

Օր երկրորդ

Առավոտյան յոթին դուք ժամադրված եք Ստեփանակերտի ստադիոնում: Այն գտնելը հեշտ է, «Պլոշյադի» ուղիղ կողքն է՝ Ազգային ժողովի հետնամասում: Այնտեղ վաղ առավոտյան յոգայի ուսուցիչ Գրիգորին դասընթացներ է անցկացնում համահունչ տեղական հանգիստ հոգեվիճակին: Յոգայից հետո նորից գնացեք հրապարակ, այս անգամ այն դատարկ տեսնելու համար: «Բաժակ» կամ «Ստատուս» սրճարանում լավ նախաճաշելուց հետո ունեք մի քանի տարբերակ. գնալ «Ձաբ Արցախ» և մի քիչ աշխատել այնտեղի քովորքինգում, մտնել համեմատաբար նոր բացված պատկերասրահը կամ մի երկու ժամով լքել Ստեփը և ուղևորվել բավական մոտիկ գտնվող Վանք գյուղի Գանձասարի վանքը: Կարող եք ճաշել հենց գյուղի ռեստորանում: Դուք հաստատ կճանաչեք այդ վայրը, որի առջև ավանակի արձանն է, կողքին մեծ նավ է կանգնած, իսկ մյուս կողմից՝ «Սուպեր Դուքյան» մթերային խանութն է:



→ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի դռները

↓ Երեկոյան թեյախմություն՝ «Տատիկ-Պապիկի» հարևանությամբ



↓ «Բարդակ» փաբի
նկարազարդ սեղանները

Վերադառնալուն պես

Երբ վերադառնաք Ստեփ, կարող եք կրկին պտտվել քաղաքով, Ստեփանակերտով զբոսնելը երբեք շատ չի լինում: Չմոռանաք մայրամուտին հայտնվել քաղաքի բակերից մեկում՝ տեսնելու և հիշողության մեջ պահպանելու ավանդական լվացքները հենց այդ լուսավորության ներքո: Չզարմանաք, եթե բակերով անցնելիս խորովածի հոտ զգաք: Հավանաբար վերևի հարկերից մեկում որևէ մեկն իր պատուհանին հարմարեցված մանղալում խորոված է պատրաստում: Սովորական երևույթ է Ստեփում: Այդքան քայլելուց հետո վստահաբար սոված կլինեք: Շարժվեք դեպի քաղաքի կենտրոնական հատված: Երբ մտնեք «Ռուբենի», հայացքով փնտրեք սլավոնական արտաքինով, 60-ն անց ակնոցով մատուցողուհու: Տիկին Ակսանան ձեզ խորհուրդ կտա արցախյան լավագույն ուտեստները, բայց սկզբի համար կբերի իրենց հայտնի «բուլյոնը», որը, համադրված տեղական տապակած բամիայի հետ, կդառնա ձեր կերած երբևէ ամենահամեղ բանը: Որևէ դեպքում քյաբաբ չպատվիրեք. արցախցիներն այն չեն սիրում և առանձնահատուկ գլուխ չեն դնում պատրաստելիս:

Այդ ամենը մարսելու համար դուրս եկեք նորից փողոցները չափչփելու: «Պիտաչոկին» չհասած՝ աջ թեքվեք ու մտեք տեղի մանկական զբոսայգի: Առանց որևէ քննադատության այնտեղի ատրակցիոններից օգտվել թողնում են նաև մեծերին:

Նույն Ազատամարտիկների պողոտայով շարունակեք իջնել դեպի «Կոլցեվոյ», ճանապարհին բաց չթողնեք Ստեփանակերտի հանրապետական գրադարանը, որը շուտով նշելու է իր հարյուրամյակը: Գրադարանի աշխատակիցները ձեզ մեծ սիրով կընդունեն, նույնիսկ սուրճ կհյուրասիրեն և կպատմեն գրադարանի պատմության, այնտեղ տեղի ունեցած բազմաթիվ կարևոր հանդիպումների (օրինակ՝ Ավետիք Իսահակյանի հետ) մասին: Ու կտեղեկացնեն, որ այսօր ստեփանակերտցիները ժամանակակից սիրավեպեր են սիրում կարդալ:

Ստեփի ձեր այցը եզրափակող կետը պիտի լինի «Բարդակ» փաբը: Այն քաղաքում բացված առաջին, բայց արդեն ոչ միակ փաբն է: Այստեղ նույնպես հնարավոր է շատ ծանոթների տեսնել, հեչ որ չէ՝ Արեգ Բալայանի Բլօջիկներին կհանդիպեք պատերին ու սեղաններին: Չմոռանաք սեղաններից մեկի վրա մի խելացի միտք փորագրել, որ ամեն անգամ վերադառնալով ուրախանաք: Իսկ դուք հաստատ դեռ շատ եք վերադառնալու:

Տան ճանապարհին բարձրացեք «Տիտանիկի» (չարաբաստիկ նավի տեսքով Ստեփանակերտի ամենաբարձր շենքի) ամենավերևի հարկը: Եթե ձեր բախտը բերի ու ձեղնահարկի դուռը բաց լինի, կհայտնվեք մի հարմարավետ տանիքում, որտեղից հրաշալի երևում է Ստեփանակերտի գիշերային անցուդարձը:

Դեպի տուն

Հաջորդ օրը վաղ առավոտյան ճանապարհ ընկեք, բայց մինչ Ստեփանակերտից դուրս գալը անպայման մի տուփ ժենգյալով հաց գնեք այն նույն շուկայի տատիկներից ու մի քանի նուռ: Ի դեպ, կարող եք նաև շուկայից դուրս գալով մի քանի մետր այն կողմ մտնել «Վանիլլա» ու մի տուփ էլ արցախյան փախլավա տանել ձեզ հետ, որի մի մասը հաստատ կուտեք ճանապարհին:

«Դեդոն ու Բաբոն» ձեզ այս անգամ բարի ճանապարհ կմաղթեն: Այսքանը տեսնելուց հետո զարհուրելի անցակետերն այլևս այդքան վախենալու չեն թվա, ճանապարհն էլ անհամեմատ կարճ կլինի: Տուն հասնելուն պես ձեզ անխուսափելիորեն կպատի սուր կարոտի զգացումը և փախլավայի մնացորդներն էլ կվերանան հենց այդ պահին: Այս զգացումով երկար եք մնալու, քանի որ ինքներդ էլ տեսաք, որ «Ազատ Արցախը ողջունում է ձեզ» ցուցանակը միշտ արդիական է, և ազատ Արցախն իրոք ընդունեց ձեզ որպես հին բարեկամի:

Մարգարիտ Միրզոյան
Արեգ Բալայան, Բիայնա Մահարի, Մարգարիտ Միրզոյան, Էլեն Բաբալյան

Մի Բարդակ ու մի Ազատ

Ինչպես և ինչու արցախցի Ազատը բացեց Ստեփանակերտի միակ ու անկրկնելի «Բարդակ» փաբը, և ի՞նչ կարիք կա այս խառը ժամանակներում դրանից բացի ստեղծելու «Մառանը» (որի տարածքում առայժմ ապրում են Դանթե և Բեատրիչե ոչխարները):

Առաջին չորս շիշը

2017-ից սկսած Արցախի պարտադիր այցելության կետերից է Ստեփանակերտի «Բարդակ» փաբը: Հիմնադիրն Ազատն է՝ շարժուն, վառվռուն կանաչ աչքերով, անդադար ֆիզիկական աշխատանքներից ու լեռնային արշավներից մկանուտ դարձած մի տղա, որն այնպես է սիրում Արցախը, որ ակամայից վարակվում ես նրա սիրով ու թվում է՝ ինքդ էլ ես մեծացել այս սարերում ու անտառներում:

Ազատը «Բարդակը» բացեց ապրիլյան պատերազմից վերադառնալուց հետո, հոր սարքած կիսակառույցում, որտեղ ժամանակին հաճախ էին հավաքվում ընկերներով: Այդ նույն ընկերներով էլի հավաքվեցին, մի քիչ պատերն ամրացրեցին, բարի սեղան հավաքեցին, մի քանի պադոնե սեղան-աթոռ հարմարեցրին ու վերջ՝ փաբը պատրաստ էր: Ինտերիերի իրերն իրենց ոտքով եկան՝ հին մագնիտոֆոն, հնաոճ կահույք (կամ գոնե մի մասն այդ կահույքի), փայտե վառարան, սովետական պլակատներ, դարին հասակակից տեսախցիկ, ճապոնական ահռելի հովհար, հին լապտերներ, մի խոսքով՝ անգլիական ավանդական փաբերի լավագույն օրինակներով ձեռքի տակ եղած իրերից ստեղծեցին Ստեփանակերտի երիտասարդության սիրելի չեք փոյնթը: Փաբի դռները բացելու ժամանակ կար ընդամենը չորս շիշ խմիչք, բայց դե կարևորը՝ սիրտդ լեն պահես:

↓ «Բարդակում» նույնիսկ զուգարանի պատն ունի պատմություն

Մեր շուրջն ամենուր է բարդակ, բառը մեզ շատ հարազատ է, ոչ ոք ոչ մի բանից գլուխ չի հանում արդեն երեսուն տարի է: Բացի այդ, այս բառը լավ ֆիլտր է կեղծ բարեպաշտ մարդկանց զտելու համար



Հարազատ բարդակ

«Բարդակը» հեղաշրջում արեց: Հանկարծ պարզվեց, որ Ստեփանակերտում ու հարակից տարածքներում կան շատ երիտասարդներ, որոնք ունեին նման վայրի կարիք՝ ռոք էին սիրում ու Ղարաբաղի թթի օղուց ավելի գերադասում Արցախի գինին: Շատ արագ փաբի մշտական հաճախորդներ դարձան նաև արտասահմանյան ընկերությունների աշխատակիցները: «Բարդակը» նրանց հիշեցրեց իրենց ծննդավայրի շունչն ու ազատությունը:

Փաբի անունն Ազատն ընտրել է երկու հիմնավորմամբ. «Նախ՝ մեր շուրջն ամենուր է բարդակ, բառը մեզ շատ հարազատ է, ոչ ոք ոչ մի բանից գլուխ չի հանում արդեն երեսուն տարի է: Բացի այդ, այս բառը լավ ֆիլտր է կեղծ բարեպաշտ մարդկանց զտելու համար, նրանք կգնան գլամուր, եվրոպական անվանում ունեցող վայր, չեն գա բարդակ տեղ, ու մեր ուզածն էլ հենց դա է»: Ազատը չէր սխալվել, նրա ստեղծած վայրում հավաքվել են անկեղծ, ազատ շփվող ու իրական արժեքների մասին զրույցներ գնահատող մարդիկ, առանց պաթոսի ու ռազմահայրենասիրական կենացների: Հատկապես ակտիվ են այստեղ անցնում ուրբաթ երեկոները՝ անգլիական լավագույն ֆրայդեյնայթերի ավանդույթի համաձայն: Մեծ սեղանի շուրջ հավաքվում են անգլերեն, ռուսերեն, հայերեն, արցախերեն խոսող երիտասարդներն ու խաղում, օրինակ՝ «Այլ կերպ»:

Փաբ մտնողի ձեռքերում հաճախ կտեսնես նվեր-խմիչք, օրինակ՝ շաբաթվա սկզբին բանակի ընկերը Երևանից ուղարկել է «Յագերմեյսթեր», ամբողջ շաբաթ սպասել է, որ ուրբաթ օրը կիսի բարդակցիների հետ: Հարցնում եմ՝ իսկ ֆեյս-քընթրոլի հարցը ո՞նց եք լուծում: Ժպտում է. «Զգացվում է, որ Արցախից չես, այստեղ բոլորը բոլորին գիտեն, ով պետք չի, ինքը չի էլ գալիս»:

Զարթնի՛ր

Բարդակը հեղաշրջում արեց ոչ միայն արցախցի երիտասարդների համար, այլև այն տուրիստների, որոնք ոչ մի կերպ

չէին էլ ակնկալում ավանդապաշտ այս տարածքում գտնել փաբ՝ Դիփ Փարփլով ու ռոմ կոլայով: Ու ինչպես բոլոր աճող օրգանիզմները, «Բարդակն» էլ սկսեց մեծանալ ու զարգանալ: Ամեն ամիս մի քանի նոր իրեր էին հայտնվում՝ առավել էկլեկտիկ ու հետաքրքիր դարձնելով Ազատի թագավորությունը: Շատ ուրախացան սովետական սառնարանի գալով, այնքան, որ միանգամից կարմիր ներկեցին: Սանհանգույցի դուռը քողարկեցին հին վինիլներով՝ կենտրոնում ազատ տեղ թողնելով պրոլետարների առաջնորդի հպարտ կիսանդրու նկարի համար: Սյան երկայնքով գրեցին «Զարթնի՛ր», վերևից կախեցին հարսնացուի քող՝ միգուցե ինչ-որ մեկին պետք գա, երբ զարթնի:

Սեղանների գրվածքները... Առանձին ուսումնասիրության թեմա են «Բարդակի» սեղանները: Պատմվածք, նույնիսկ վեպ կարելի է կազմել, ժանրը՝ պատմական դրամա՝ սիրային ելևէջներով: Ամեն հնարավոր անկյունում Արեգ Բալայանի հայտնի Բլօջիկներն են՝ փաբի հենց մուտքի մոտ արկի վրա, մինչև բարի սեղան: Թվում է՝ Բլօջիկները հենց այստեղ էլ ծնվել են, հետո տարածվել ամենուրեք:

Պատերից մեկի վրա դեռ 18-ին միայն Թալիշի գյուղապետարանի ցուցանակն էր, վերջին պատերազմից հետո՝ արդեն նաև Տիգրանակերտինը: Չես հասցնում տխրել, երբ նույն պատի վրա աչքդ նկատում է ծանոթ մի տղամարդու դեմք: Միայն շատ քչերը հիմա դեմքով կճանաչեն ֆրանսիացի երգիչ Ջո Դասսենին:

Առաստաղն էլ անմասն չի մնացել Ազատի ու նրա ընկերների ստեղծագործ մտքերից: Երկայնքով մեկ մեծ հնդկական կտոր է ամրացված, որի մեջ նրանք նետում են հավելյալ գումարները: «Գերշահույթ» տերմինը փաբին անծանոթ է, բայց ձեռքի տակ հայտնված ավել գումարը հավաքում են հենց այստեղ, ու ամսվա վերջում հանում ու, օրինակ, կոմունալները վճարում:

«Բարդակ» փաբն ունի իր պաշտոնական չեքինը: Ազատը պատմում է, որ երբ փոստից զանգեցին, ասացին, որ Ֆրանսիայից նամակ ունի, մտածեց՝ երևի ազերներն են դժգոհել, քանի որ հաճախ էր կիրառում #ArtsakhIsArmeniaNot Azerbaijan հեշթեգը: Պարզվեց՝ Գուգլից է, գրում էին, որ եթե մարդիկ շատ են ուզում check in լինեն ու new place են պահանջում, Գուգլը հետաքրքրվում է օգտատերերի պահանջարկով ու հաստատում հասցեն Գուգլի քարտեզում:

Առանձին ուսումնասիրության թեմա են «Բարդակի» սեղանները: Պատմվածք, նույնիսկ վեպ կարելի է կազմել, ժանրը՝ պատմական դրամա՝ սիրային ելևէջներով

← Բի-Բի Քինգն ու Էլվիսը նույնպես իրենց տեղն ունեն «Բարդակում»

Բարդակից բացի

Ազատի մանկության հեծանիվը մնացել է փաբի դռներից դուրս՝ մուտքի մոտ, ավտոբուսի կմախքի հետ հարևանություն անելու: Բայց իր մանկական երազանքներից Ազատը չի հրաժարվում: #եկԱրցախ հեշթեգին ու գաղափարին հավատարիմ՝ «Բարդակից» բացի մեկ այլ վայր է մտմտում ստեղծել: Արդեն 50 տարով վարձակալել է նախկին մարզահամալիրի տարածքն ու կամաց-կամաց իր ձեռքերով կառուցում է. «Ուզում եմ սարքել համերգային կենտրոն, կարկասները լավն են, կարող ենք լույսերն ու աուդիոն ամրացնել այնպես, որ չխանգարի մարդկանց»:

900 քմ-ոց հսկա տարածքի մի հատվածն արդեն այս տարի գործարկել է. մի քանի տնակներ գետի ափին հյուրընկալել են ճամբարական երեխաների Հայաստանից: Սակայն օգոստոսի սկզբին ռազմական դրության սրացման արդյունքում միանգամից երկու միջոցառում հետաձգվեց: Ամառային հանգստի սեզոնն ինչ-որ կերպ փակելուց հետո անցավ նույն տարածքում Մառանի կառուցմանը: Գինի մատուցելու մշակույթ է սովորեցնելու, կլինեն հինգ-վեց սեղաններ, գինի ու խորտիկներ:

Տունը կմնա կանգուն

Նույն տարածքում գտնվող երկհարկանի տունը մի ժամանակ բնակելի էր, բայց դա այնքան վաղուց էր: Ու միևնույն է՝ տունը կմնա կանգուն, կվերակառուցվի, կթարմանա, բայց չի քանդվի: Որովհետև տունը հայտնվել է Ազատի ձեռքերում, իսկ նա նոր իրեր չի սիրում՝ շունչ, հոգի, ապրած կյանք չկա դրանց մեջ: «Պատշգամբի փայտը շատ վատ վիճակում էր, ժամանակը կերել էր գրեթե ամբողջովին: Հիմա լավ է, ուշքի է եկել, վերանորոգել եմ, այս սենյակում հիմնարար պատն էր ճաք տվել, բայց դա էլ խնդիր չէր, ուղղեցի»: Առաստաղի լուսամփոփը չափսերով մեծ է ու աչք է զարնում, ակնհայտ այս տարածքից չէ, դառը ժպիտով ասում է, որ Տիգրանակերտից է բերել. «Երբ իմացա, որ էլ մերը չի լինելու, գնացի մասունքներ հավաքելու»:

Ապագա «Մառանի» սենյակներից մեկում նկատում եմ մի աստվածային կոմոդ, իսկական խորան, կախարդված մոտենում եմ ասես ծնկաչոք աղոթելու: Ազատը նկատում է հիացմունքս ու պատմում, որ իր հետ էլ էր նույնը տեղի ունեցել, երբ առաջին անգամ տեսավ նրան: Ընդհանրապես, Արցախում ով կոմոդ է վաճառում, առաջինն Ազատին են զանգում, գիտեն, որ հասկանում է իրական արժեքը:

Նույն սենյակի մյուս անկյունում կոմոդի մրցակիցն է՝ 1897 թվի ֆիզհարմոնիան: «Արցախում սրանից էլ չկա: Օդեսայից են բերել, բայց գերմանական է: Ջութակիս ուսուցչուհու տանն եմ տեսել ու մի քանի տարի փող կուտակել, որ կարողանամ գնել: Շատ նուրբ գործիք է, թոզի փշուր ընկնի, չի նվագի: Ստեղներն առանձին-առանձին մաքրել եմ, որ հաշտվի, սկսի նվագել»,– պատմում է ու նստում գործիքի դիմաց, դանդաղ ու ակնածանքով սկսում նվագել: Ազատը տասնհինգ տարի ջութակ է նվագել, այդքանը բավական էր երաժշտի կարիերա սկսելու, հետագայում համերգներ ու շրջագայություններ ունենալու համար:

Բայց Արցախը ստիպեց գերզգայուն գործիքը դնել մի կողմ ու ձեռքն առնել կամ զենքը՝ ռազմական էսկալացիաների ժամանակ, կամ էլ սղոց, մուրճ և այլ ոչ նուրբ գործիքներ: Ծննդավայրը նրան չտվեց ընտրության հնարավորություն: Շինության մուտքի մոտ գոմ կա, մեջը երկու ոչխար է պահում՝ Դանթեն ու Բեատրիչեն: Հարցնում եմ՝ մնալո՞ւ են այստեղ: Ասում է՝ սա նրանց տունն է, ես հո թուրք չեմ, տնից հանեմ: Հայը տուն է կառուցում, արցախցին՝ տներ:

← Փաբի հիմնադիր Ազատը (կենտրոնում)՝ ընկերների հետ

Էլեն Բաբայան
Բիայնա Մահարի

«Պետք է վերածնվենք արվեստի միջոով».
Ստեփանակերտի լուսաբացի փառատոնը

«Sunrise Stepanakert» փառատոնի համահիմնադիր Շուշան Քեշիշյանը ԵՐԵՎԱՆԻՆ պատմել է հեղափոխերազմական Արցախում առազին մշակութային փառատոնը կազմակերպելու և այնտեղ հիմնավորվելու մասին:

Ի գործ

Շուշանին հանդիպեցի Երևանում: Կարճ ժամանակով էր այստեղ, մի շաբաթից պիտի մեկներ Արցախ: Այնտեղ հիմնավորվել է շուրջ մեկ տարի առաջ, երբ 2021-ի ամռանն ինքն ու Լիլիթ Հակոբյանն անցկացրին առաջին «Sunrise Stepanakert» մշակութային փառատոնը: Նրանք Հայաստանում հայտնվեցին «Ի գործ» ծրագրով: Շուշանը եկել էր Լիբանանից, իսկ Լիլիթը՝ Ռուսաստանից: Շուշանն Արցախում մինչ պատերազմ երկու անգամ էր եղել: «Այն, որ Լիբանանից եմ տեղափոխվել Հայաստան, կարևոր դեր է խաղացել,– ասում է նա,– ինձ համար նորություն չէ, երբ հոսանքը պարբերաբար անջատում են կամ երբ չկար անվտանգության երաշխիք»: Մնալով Արցախում՝ Շուշանը դարձել է նաև «ՀԱԲ Արցախի» տնօրենը: Մի տանիքի տակ հավաքել են Արցախում սոցիալական ձեռնարկությանը խթանող տարբեր լուծումներ. իրականացնում են տարբեր ծրագրեր, կա նաև քովորքինգի տարածք, որտեղ մարդիկ գալիս աշխատում են, սեմինարների և դասընթացների մասնակցում:

↑ Շուրջպար Ստեփանակերտի թատրոնի առջև Sunrise փառատոնի ժամանակ

← Սալիգործության դասընթաց Sunrise Stepanakert փառատոնի շրջանակներում

Որամաբանական շարունակությունը

Թե՛ Շուշանի, թե՛ Լիլիթի տեղափոխությունը Հայաստան համընկավ պատերազմի օրերի հետ: Լինելով արվեստի ոլորտից՝ սկսեցին մտածել, թե ինչպես կարող են օգտակար լինել: Այդ ժամանակ Շուշանն արդեն հասցրել էր «Զանգակ» գրախանութում փոքր ցուցադրություն-վաճառք կազմակերպել, որի հասույթն ուղղվել էր պատերազմի արդյունքում տուժած ընտանիքներին: Տրամաբանորեն հաջորդ քայլը պիտի լիներ արդեն հետպատերազմական Ստեփանակերտում որևէ նախաձեռնություն իրականացնելը: Այդպես էլ արեցին. հավաքվեցին և ճանապարհ ընկան դեպի Արցախի մայրաքաղաք՝ տեսնելու, թե ինչ կարող են անել: Տեղում հասկացան, որ մի ցուցադրությամբ այս պատմությունը չի ավարտվի. պետք էր ավելի մասշտաբային և ընդգրկուն նախագիծ մտածել: Ոգեշնչված վերադարձան Երևան արդեն այն մտքով, որ արվեստի մեծ փառատոն է հասունանում՝ վարպետաց դասերով, կինոդիտումներով, ցուցադրություններով և համերգներով: Այդպես ստեղծվեց «Sunrise Stepanakert» փառատոնը, որն անցկացվեց նաև 2022-ին, իսկ թիմն արդեն իսկ սկսել է նախապատրաստական աշխատանքներն այս տարվա փառատոնի համար:



«Խավարից հետո միշտ լուսաբաց է լինում, դա անհերքելի է,– վստահ է Շուշանը,– այս միտքը դարձավ մեր կարգախոսը և փառատոնը հենց այդպես էլ անվանեցինք՝ «Sunrise Stepanakert»: Այն ունի մեկ ընդհանուր նպատակ՝ վերականգնում արվեստի միջոցով:

Հենց Արցախում

Առաջին տարին բարդ էր: Աղջիկները նոր էին եկել ու ծանոթանում տեղացիների հետ, իսկ արդեն երկրորդ փառատոնի ժամանակ հասցրեցին երիտասարդության հետ կապեր ստեղծել ու գտնել իրենց լսարանը: «Մեր թիրախային խումբը ստեղծարար մարդիկ են, Թումոյի ուսանողներ, ինքնակրթվող ու հետաքրքրասեր մարդիկ, որոնց համար հաճույք է ունենալ նման մի միջոցառում հենց Արցախում»: Որպես սփյուռքի ներկայացուցիչներ աղջիկները ցանկանում էին, որ փառատոնը ոչ միայն հարթակ տրամադրի տեղացի արտիստներին, այլև Արցախում համախմբի սփյուռքի և Հայաստանի ստեղծագործ ուղեղներին:

Լուսաբային

Առաջին փառատոնի թեման թվային արվեստն ու լուսանկարչությունն էին: Աշխարհի բոլոր կողմերից շուրջ 20 արտիստի աշխատանքներ ներկայացվեցին: Այս տարի արտիստների քանակը 13-ն էր, իսկ այցելուների քանակը՝ սպասվածից ավելի: Շուրջ 20 միջոցառման եկան մոտ 1400 մասնակից:
Վանաձորյան «Լավ էլի» խմբի երաժիշտները, որոնք փառատոնի այս տարվա երաժշտական հյուրերից էին, չգիտեին, որ Արցախում այդքան երկրպագուներ ունեն. շուրջ 400 մարդ էր մասնակցել Արցախի մշակույթի եվ երիտասարդության պալատում տեղի ունեցած իրենց համերգին: Դասընթացները և վարպետաց դասերը ևս մարդաշատ էին: Շուշանը պատմում է, որ նախանցյալ տարի հայտերի քանակի սահմանափակում չէին դրել՝ մտածելով, որ դժվար շատ մարդ գրանցվի: Մի պահ հայտնաբերեցին, որ նախատեսված 30-ից երեք անգամ ավել մարդ է դիմել: Ստիպված, բայց մեծ սիրով երկու անգամ անցկացրին: Դասընթացների թեմաները շատ տարբեր են: Անցյալ տարի ունեցել են շուրջ տասը վարպետաց դաս՝ կավագործության, վլոգինգի, հանրային կապերի, փախլավա և ժենգյալ պատրաստելու, արվեստի, ձայնային թերապիայի և այլն: «Տեղացի երիտասարդությունն ուզում է ամեն ինչում մասնակցել, կրթվել, ծանոթանալ աշխարհի տարբեր անկյուններից եկած մարդկանց հետ,– պատմում է Շուշանը,– փառատոնին մասնակցած բոլոր հյուրերն էլ Արցախին նվիրված մարդիկ էին, նույնիսկ վճար չվերցրին մասնակցության համար»:

Հիմնականում տարվա ընթացքում հենց դասընթացավարներն են գալիս և առաջարկում որևէ հետաքրքիր թեմա: Անցյալ տարի նաև, փորձելով տարբերվել նախորդից, ժամանակակից և ազգագրական պարի դասընթացներ ևս ունեցան: Նման վարպետաց դասերից մեկից հետո էլ թիմին միացավ Սոնյա Ավագյանը, որն անցյալ տարի իր վրա վերցրեց արտիստների հետ կապի ապահովումը և փառատոնի ընթացքում գործող փոփ-ափ խանութը: Նաև հենց Ստեփանակերտից թիմին միացել է ևս մեկ անդամ՝ Գայանե Սարգսյանն ու բազմաթիվ երիտասարդ կամավորներ:
«Sunrise Stepanakert»-ի գլխավոր հովանավորն է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը:

Մայրամուտից հետո

«Sunrise»-ի թիմն արդեն բացել է «Sunrise Master file»-ի google sheet-ը (հինգից ավելի էջերով) և այնտեղ այս տարվա համար գրի է առնում գաղափարներ համերգի, վայրերի, վարպետաց դասերի թեմաների վերաբերյալ: Եվ շուտով կսկսեն իրար կապել այդ գաղափարները, շփվել մարդկանց հետ, ի մի բերել ունեցածը:
«Չպիտի հուսահատվենք: Եթե անընդհատ մտածենք՝ բայց ապահո՞վ ա, բայց արժի՞, այդպես էլ ոչինչ չենք անի կյանքում: Պիտի ադապտացվենք,– ասում է Շուշանը:– Առաջին Sunrise Stepanakert-ի ժամանակ շատերը պատերազմից հետո առաջին անգամ եղան Արցախում: Համախմբելով Հայաստանի, Արցախի, Սփյուռքի հայերին՝ մենք ասում ենք, որ ամեն մայրամուտից հետո սկսվում է լուսաբացը: Կյանքը շարունակվում է, պետք է վերածնվենք ու դա անենք արվեստի միջոցով»:

Մարգարիտ Միրզոյան
Sunrise Stepanakert փառատոն

Պարկ հոթել

ԶԻՆԱՆՈՑԸ՝ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ, ՈՒ, Ի ՎԵՐՋՈ, ՀՅՈՒՐԱՆՈՑ

Ինչպես է ստեղծվել, ինչով է յուրահատուկ ու ինչ մասնակցություն է ունեցել 2020 թվականի պատերազմում Ստեփանակերտի ամենահայտնի հյուրանոցներից մեկը:

Ներս է մտնում ձեռնափայտով մի զառամյալ պապի, տեղավորվում հյուրանոցի սպասասրահի բազմոցին ծոցագրպանից հանում ինչ-որ թղթեր ու հանգիստ սպասում: Պարկ հոթել հյուրանոցի աշխատակիցները միանգամից գլխի են ընկնում՝ բժշկի մոտ է եկել:
— Պապի ջան, ինչով օգնենք:
— Բալա ջան, սրտաբանի մոտ եմ ուզում գնալ, էս սիրտս լավ չի, 90 տարվա սիրտ ա...
— Պապի ջան, արդեն տասնհինգ տարի է՝ սա էլ պոլիկլինիկա չի, հյուրանոց է:

Ամրացնել, ոչ թե քանդել

«Պարկ հոթել Արցախ» հյուրանոցը ստեփանակերտցիների համար այդպես էլ մնաց «քոհնա պոլիկլինիկա», իսկ Արցախի հյուրերի համար սա ամենակոլորիտային ու ազգային ավանդույթներով ու հայկական ինտերիերով տունն է: Շենքը շատ հին է, 1870-ականներին այստեղ գործում էր քաղաքի զինանոցը, 1926-ին այլևս զենքի կարիք չկար, շենքը վերածեցին քաղաքային հիվանդանոցի, որը 1960-ականներին վերանորոգեցին ու դարձավ պոլիկլինիկա: 2006-ին որոշեցին քանդել հիմնահատակ, քանի որ այն գտնվում էր Ստեփանակերտում վերջերս կառուցած եկեղեցու և այգու արանքում: Սակայն Իշխանյանների ընտանիքին հաջողվեց կասեցնել որոշումն ու փրկել հինավուրց շենքը:
2008-ին սկսվեց վերակառուցումը: Ապագա հյուրանոցի հիմնադիրները վերակառուցման և ֆասադի պահպանման պատասխանատվությունն ամբողջովին վերցրեցին իրենց վրա: Արցախի կառավարությունը թերահավատ էր, քանի որ շինությունը շատ հին էր ու խարխուլ: Ամենասկզբում վիրահատական միջամտությամբ բացեցին հիմքը, զննեցին, երկրաբանական հետազոտությունների միջոցով ստուգեցին ու հասկացան խնդրի ծավալը: Հետո Գերմանիայից ներմուծեցին բետոնն ամրացնող սարքավորումներ, զուգահեռ սկսեցին մերկացնել պատերը, հանել նրա վրայից պատմության փոշին ու հավելյալ շերտերը:
«Երբ բացվեցին հին պատերը, հասկացանք, որ չենք սխալվել. շենքի պոտենցիալն ահռելի էր»,– պատմում է հյուրանոցի համասեփականատեր Դավիթ Իշխանյանը: Ներսի հարդարման աշխատանքները, ընդհանուր

ինտերիերը թելադրել է ֆասադը՝ նույն ոգով ու ոճով՝ երկաթ, տեղական կաղնու փայտ: Ու որքան էլ բիզնեսի տեսակետից խելամիտ լիներ վերելակ տեղադրել, նոր տերերը, միևնույն է, չեն նեղացրել շենքին, նրա արտաքինի մեջ միջամտություն չեն արել ու չեն խախտել ընդհանուր ճարտարապետությունը: Այլ կերպ ասած՝ հարգել են տարիքը:

Հյուրանոցի տերն ու ծառան

Վերակառուցումը բարեհաջող ավարտվեց 2011-ին ու «Պարկ հոթել Արցախ» հյուրանոցը բացեց իր դռները: Շենքն ասես գտավ իր իրական կոչումը՝ զինանոցի, հիվանդանոց-պոլիկլինիկայի դարավոր դեգերումներից հետո: Հետաքրքիր փաստ. ի սկզբանե հյուրանոցի անվանումը եղել է Արցախ, ոչ թե Ղարաբաղ, ինչպես, օրինակ, մինչև վերջերս կոչվում էին շատ կազմակերպություններ: Ու նույնիսկ երկիրը՝ Լեռնային Ղարաբաղ: Աշխատողների քանակը շատ չէր, հիմնականում՝ Իշխանյանների ընտանիքի անդամներն էին: Որոշեցին, որ լինելու են փոքր, ընտանեկան հյուրանոց, որտեղ առաջնահերթը լինելու է հյուրի կարծիքը, նրա հարմարավետությունը: Իհարկե, ստեփանակերտցիները դեռ երկար իներցիայով գալիս էին ու փնտրում պոլիկլինիկայի տարբեր կաբինետներ: «Մի անգամ մի կին մտավ ներս, արագ գնաց միջանցքով՝ ասես գիտեր, թե ուր է գնում: Հասավ, չգտավ իր ուզածը, հետ եկավ ու հարցրեց՝ բա ռենտգենի կաբինետն ո՞ւր եք տարել,– պատմում է հյուրանոցի մենեջեր Լիլիթ Իշխանյանն ու շարունակում,– մի անգամ էլ մի տղա եկավ ու ուղիղ գնաց 106 սենյակի դիմաց կանգնեց, ասաց՝ սա եմ ուզում: Լյուքս սենյակ էր, բավականին մեծ, փորձեցինք այլ տարբերակ առաջարկել, ասաց՝ սա իմ հոր աշխատասենյակն է եղել, պոլիկլինիկայի գլխավոր բժիշկն էր, ես փոքր ժամանակ անընդհատ գալիս էի այստեղ, հիմա հայրս չկա, եկել եմ կարոտն առնեմ»:
Կամաց-կամաց վերածնվող Արցախում գործող ընտանեկան հյուրանոցը շատ արագ սիրվեց հյուրերի կողմից: Հենց արցախցիներն իրենց տներից ինտերիերի շատ իրեր բերեցին հյուրանոցին ի պահ, քանի որ վստահ էին, որ այստեղ դրանց լավ կնայեն: Օրինակ՝ հին կարասներ, փայտե արձանիկներ, գերմանական «Զինգեր» կարի մեքենան, որը, ի դեպ, մինչ օրս էլ աշխատում է՝ նրանով են կարում սավանները: Նախկին պոլիկլինիկայի արխիվը վերածվեց հյուրանոցի ռեստորանի, բայց պահպանեց արխիվին բնորոշ լռությունն ու խորհրդավոր գաղտնիությունը: Փայտե մեծ պատշգամբով սենյակը դարձավ ամենապահանջվածը, այն գրեթե միշտ զբաղված է այստեղից բացվող տեսարանի շնորհիվ: Բոլոր սենյակներում մահճակալի կողքին դրված է Աստվածաշունչը, ու ասում են, որ որոշ օրինակներում նույնիսկ մատիտով ընդգծած հատվածներ կան. հյուրերը չեն դիմացել ու նշումներ են արել կարդալիս:

→ Շատ իրեր իրենց տներից բերեցին հենց արցախցիները

Հետո եղավ պատերազմը

Ու «Պարկ հոթել Արցախը» վերածվեց շտաբի: Ժուռնալիստների համար: Հյուրանոցի ընդունարանը դարձավ նյուզ-ռում, ուր նոթբուքերով կողք կողքի աշխատում էին մրցակից ու հաճախ իրարամերժ զլմների լրագրողներ ու լուսանկարիչներ: Բոլոր կարևոր լուրերը ծնվում էին այստեղ՝ հաճախ այդպես էլ չգտնելով իրենց ընթերցողին՝ մնում էին չգրված, քանի որ ռազմական գաղտնիք էին:
Ժուռնալիստներն աշխատում էին աղմկոտ, կռվելով, իրար հերքելով: Անդադար զինվորականներ էին գալիս ու գնում առաջնագիծ, շփվում իրենց նախընտրած մամուլի հետ: «Անձնակազմի տղամարդիկ գնացել էին կռիվ, մնացել էինք կանանցով: Աշխատում էինք աննկատ, լուռ, ապահովում բոլորի կոմֆորտը: Մայրս խոհարարին էր օգնում, ես անթիվ զանգերին էի պատասխանում, հետևում էինք, որ նույնիսկ ռումբերի պայթյունների տակ էլ մեր հյուրանոցում ապրողներն ունենան մաքուր, սպիտակ սավան, ուտելիք, սուրճ: Արտասահմանցի ժուռնալիստների համար դա հատկապես կարևոր էր: Հավատացեք, այն օրերի համար դա հեշտ չէր տրվում մեզ»,– պատմում է Լիլիթ Իշխանյանը:
Պատերազմի օրերին հյուրանոցի շենքը նաև լավագույն ապաստարանն էր: Տագնապի ազդանշանի ժամանակ իջնում էին նկուղ, որն ի սկզբանե զորանոցի ապաստարանն էր: Փրկարարներն ամեն դեպքում ավազե պարկեր էին բերել, հարակից շենքերի բնակիչները նույնպես այստեղ էին հավաքվում, գիտեին, որ հաստ պատերը կպաշտպանեն: Իշխանյանը պատմում է, որ այդ օրերին հյուրանոց շատ էին զանգում ադրբեջանցիները. «Կոտրված ռուսերենով հարցնում էին՝ ազատ տեղ ունե՞ք: Պատասխանիս չսպասելով՝ արագ ավելացնում՝ դե, ազատե՞ք սենյակները, շուտով կհասնենք: Մեկ, երկու, հինգ զանգից հետո արդեն սովորեցի տարբերել, միանգամից ասում էի՝ «նե դաժձյոծես» ու անջատում»:



Քարերը շարունակեցին ապրել

Բախտի բերմամբ պատերազմի ընթացքում հյուրանոցին ոչ մի արկ չկպավ: Ինչը զարմանալի էր, քանի որ Ստեփանակերտը մաղ էր դարձել ռմբակոծություններից: «Պարկ հոթել Արցախ» հյուրանոցն իր ստեղծման օրից չի գործել միայն 10 օր՝ 2020 թվականի նոյեմբերի 5-15-ը: Հյուրանոցն արդեն դատարկ էր, երբ նոյեմբերի 9-ին մոտակայքում մի արկ պայթեց՝ ցաք ու ցրիվ տալով լոկ պատուհանները: Շենքի քարերը մնացին կանգուն: Շարունակեցին ապրել՝ ապրեցնելով նաև իր բնակիչներին:
Պատերազմի հաջորդ տարին՝ 2021-ին, եկան Վարդան և Էմմա Մարաշլյանները: Փնտրում էին կոլորիտային վայր իրենց ֆոտոատելյեի համար: Ավելի համապատասխան վայր դժվար էլ գտնեին ամբողջ Արցախում, բացեցին իրենց ստուդիան, որտեղ հիմա ներկայացնում են Սյունիքի ու Արցախի տարազները: Շենքը նրանց նույնպես իր գիրկն առավ, ապաստան տվեց:
Հիմա «Պարկ հոթել Արցախում» այնքան շատ հյուրեր չունի, որքան առաջ: Բայց Իշխանյանները չեն ընկճվում, կարևորը շենքը կանգուն պահելն էր, մնացածը ժամանակի հարց է:

Էլեն Բաբայան
Պարկ հոթել,
Արեգ Բալայան

ՈՒՐՎԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Սպեփանակերտի դրամատիկական թատրոնն ակտիվ թատերաշրջանի մեջ է, մեկնում է շրջագայություններ: Բայց վերադառնալով Սպեփանակերտ՝ դերասանները Թումանյան փողոցի գեղեցիկ շենքի փոխարեն բարձրանում են Երիտասարդական պալատի երրորդ հարկի փոքրիկ բեմ: ԵՐԵՎԱՆԸ կրուցել է թատրոնի նոր գլխավոր բեմադրող ռեժիսոր Վահագն Խաչատրյանի հետ թատրոնի ներկայի մասին, իսկ լուսանկարիչ Արեգ Բալայանը պատմել է թատրոնի շենքին նվիրված նախագծի մասին, որն իրականացրել է ԱՅԲ դպրոցի f8 լուսանկարչական ակումբի աշակերտների հետ:

ԱՅԲ դպրոցի F8 ակումբ

Ղեկավար՝ Արեգ Բալայան

Սվետլանա Հարությունյան, Ժաննա Երանոսյան, Դավիթ Զազյան, Արեգ Խաչատրյան, Սաթենիկ Մաղաքյան, Հասմիկ Մկրտչյան, Իննա Մնացականյան, Սիլվի Եղիազարյան, Սևակ Մեսրոպյան, Լիլիթ Մկրտչյան, Ինգա Սերոբյան, Անի Ազնաուրյան, Օֆելյա Շամոյան, Տաթևիկ Ղազարյան, Անի Ազիզյան, Նանե Կաբալյան, Տաթևիկ Ազարյան

Արցախի շրջափակումից մոտ մեկ ամիս առաջ երկու օրով Արցախում էի: Երկրորդ օրը պիտի մեկնեի իմ պապական Ճարտար քաղաքը, իսկ մինչ այդ ունեի մի ամբողջ օր Ստեփանակերտով միայնակ զվրնելու համար: Ամբողջ օրը անձրև տեղաց, բայց միևնույն է՝ մոտակա սրճարաններից մեկում մի աման տնական ապուր ուտելուց հետո գնացի իմ սիրելի (սովորաբար արևոտ) քաղաքով պտտվելու: Այդպես Թումանյան փողոցով մի քիչ բարձրանալուց հետո հասա դրամատիկական թատրոնի հետևի մուտքին: Ի զարմանս ինձ թատրոնի լույսերը վառ էին: Ծածկված պատուհանների արանքներով փորձեցի ներս նայել ու նկատեցի մի տղամարդու ուրվագիծ: Նա միայնակ քայլում էր թատրոնի ճեմասրահում ու նայում պատերին կախված լուսանկարներին: Երբ մոտեցա թատրոնի հիմնական մուտքին, ցուցանակ տեսա. շենքում լուսանկարիչ Սևակ Ասրյանի աշխատանքների ցուցադրությունն էր, իսկ խորհրդավոր տղամարդը հենց ինքը՝ հեղինակն էր: Ներս մտա, ծանոթացա, Սևակի հետ շրջեցինք թատրոնի ճեմասրահում, նա պատմեց լուսանկարների մասին, որոնք արված էին Արցախի կորսված տարածքներում: Մի պահ մտանք նաև թատրոնի կիսաքանդ դահլիճը: Պատմեց, որ թատրոնի պատերի մեջ կան նաև Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու քարերը:
Թողնելով Սևակ Ասրյանին թատրոնում՝ շարունակվող անձրևի տակ դուրս եկա: Մի քանի րոպե շենքին նայեցի, որը այս եղանակին յուրահատուկ խորհրդավոր էր ու քայլեցի առաջ՝ մտքումս պտտելով, թե ինչպես այս հոդվածի ներածության մեջ կպատմեմ այս կարճ, բայց շատ յուրահատուկ դրվագի մասին:

↓ Թատրոնի «Իրեղ կուռն» աղբյուրը

Առաջնախաղը

Վահան Խաչատրյանն արդեն տարուց ավել դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսորն է: Ասում է՝ թատրոնն ինձ ավելի շատ օգնեց, քան ես իրեն. «Պատերազմից հետո շատերս մեր տեղը չէինք գտնում: Ջախջախված վիճակ էր և զրո ցանկություն որևէ բան անելու»:
Նա պարբերաբար լինում էր Ստեփանակերտում և հերթական այցի ժամանակ կառավարությունում աշխատող իր ընկերները հարցրին, թե արդյոք ցանկություն կունենա Ստեփանակերտի թատրոնի հետ մի բեմադրություն իրականացնել: Նա համաձայնեց, և մի քանի ամիս անց Ստեփանակերտի երիտասարդական պալատի բեմում ներկայացվեց «Հրեշը լուսնի վրա» ներկայացումը՝ Հայոց ցեղասպանության հետևանքների մասին հանրահայտ դրամա: Այդ ընթացքում տնօրենն առաջարկեց, որ մնա թատրոնում: Վահազնը մնաց: Հաջորդ ներկայացումն արդեն մանկական էր, բեմադրվեց «Մատնաչափիկը», բայց հենց առաջնախաղի օրը տեղի ունեցան Խրամորթի դեպքերը:
Սահմանին՝ կրակոցներ, թատրոնի դերասաններից մի քանիսն արդեն առաջնագիծ են մեկնել, մարտ ամսին առատ ձյուն է գալիս, գազատար է պայթեցվել, որի արդյունքում հոսանքի ու ջեռուցման խնդիր է առաջացել: Այդ սպասողական վիճակում, միևնույն է, առաջնախաղը չչեղարկվեց, իսկ դահլիճը լեփ-լեցուն էր: Ներկայացումը 24 անգամ խաղացին ու կրկին դահլիճը լիքն էր մարդկանցով:

← Սարուպ Դավթյան՝ դերասան, ռեժիսոր. «Պապահել է՝ յոլին 4-5 ժամ փորֆ ենք արել, այնինչ կարելի էր 30 րոպեում ավարտել: Ժամանակի մեծ մասը վառարանի մոտ էինք անցկացնում, շատ ցուրտ էր»:



Հանդիպման վայրը՝ թատրոնի շինհրապարակ

Ստեփանակերտի թատրոնը ստեղծվել է 1932 թվականին՝ իր առաջին թատերաշրջանը մեկնարկելով Վաղարշ Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությամբ: Մոտ երկու տասնամյակ անց սկսվել է թատրոնի շենքի շինարարությունը: Ասում են՝ այդ ընթացքում քաղաքի կյանքը կենտրոնացել էր թատրոնի շինհրապարակում, շինարարներից բացի գալիս և օգնում էին նաև ուսանողները և շատ այլ քաղաքացիներ: Ասում են նաև, որ շենքի պատերի մեջ Շուշիի այն ժամանակ դեռ (առաջին անգամ) ավերված Ղազանչեցոցի քարեր էլ են դրվել: Թատրոնն ամեն տարի հանդիսատեսին ներկայացնում էր տարեկան մոտ 10-12 պրեմիերա, ամսական մոտ 70, իսկ մեկ օրվա ընթացքում, դերասանները մեկը մյուսին փոխարինելով, մոտ չորս ներկայացում էին խաղում: Ներկայացումների գնում էր ամբողջ քաղաքը՝ հագնելով իրենց ամենագեղեցիկ շորերը, ստեփանակերտցիներն ուղևորվում էին դեպի տոմսարկղը: Առաջին պատերազմի տարիներին Ստեփանակերտում մնացած դերասանները նկուղում էին ներկայացումներ խաղում, իսկ 1993 թվականի փետրվարի 6-ին, երբ դեռ ակտիվ պատերազմական գործողություններ էին, թատրոնի լեփ-լեցուն դահլիճում ցուցադրվեց «Աղջիկը փեսացու է փնտրում» կատակերգությունը:

Դիմագներ թատրոնի անցյալից

Բանակի ու բեմի միջև

Հերթական, 44-օրյա պատերազմից հետո Ստեփանակերտի թատրոնը հինգ առաջնախաղ է ունեցել: Առաջինը պատերազմից անմիջապես հետո դերասան Քաջիկ Հարությունյանի բեմադրած «Ալ ծաղիկն» էր, իսկ ԱՄՆ-ից ժամանած դերասանուհի Կարինե Քոչարյանն արցախյան դերասանական կազմի հետ բեմադրեց «Երկնքից ընկավ երեք խնձոր» ներկայացումը՝ Նարինե Աբգարյանի համանուն վեպի բեմականացումը: Այդ ներկայացմամբ թատերախումբն ամռանը մեկնեց Եվրոպա՝ հանդես գալով Լիոնում, Բրյուսելում, Քյոլնում ու Վիեննայում:

Այս պահին թատերախումբը քսանվեց դերակատար ունի, որոնցից երեքն այժմ դեկրետում են (նրանցից մեկը վեցերորդ երեխային է սպասում): Հիմա ևս երկու ներկայացում են բեմադրում, որոնցում ներգրավում են նաև երիտասարդ դերասանների: Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի համալսարանի առաջարկով կուրս են հավաքել: Ինքը՝ Վահագնը, ուսանողների հետ մի քանի ամիս աշխատել է պրակտիկ ծրագրով, որպեսզի կարողանան շուտ բեմ բարձրանալ և ներգրավվել Թատրոնի բեմադրություններում:

Թատերախմբի մի մասը, այդ թվում՝ առաջատար դերասանները, Թատրոնի գործից զատ նաև այլ աշխատանքով են զբաղվում, հիմնականում մտնում են բանակ, որպեսզի կարողանան իրենց ընտանիքներին ապահովել:

↑ Այժմ թատրոնի ներկայացումները տեղի են ունենում «Աշակույթի և երիտասարդության» պալատում

→ Սամվել Եվրեյան. դերասան. «Նախկինում գրեթե ամեն օր ներկայացում ունեինք, գոմսերն անմիջապես սպառվում էին: Ուսուցիչներով էինք խաղում: Մուն չէինք կարողանում գնալ: Ինչ մեքենայով էին գուն ուղեկցում, որ երկրպագուհիները չմոտենան»:

Քանդված կունը

Թեև թատերախումբն ակտիվ կյանքով է ապրում, բայց արդեն շուրջ տասը տարի այն տուն չունի. Թատրոնի հիմնաշենքը, մեղմ ասած, վատ վիճակում է: Մինչ շենքի վիճակն օր օրի վատանում է, շենքի վերականգնման աշխատանքները նախագծման փուլից այն կողմ չեն գնում:

«Ժամանակին շենքի տանիքում խնդիր է առաջացել ու այն տեղում վերանորոգելու փոխարեն թողել են այդ վիճակում ու գնալով խնդիրն ավելի է լրջացել,– պատմում է Վահագն Խաչատրյանը,– բայց այդ կառույցը շատ մեծ արժեք ունի, այնտեղի ակուստիկան, ոճը, փորձասենյակները: Այնտեղ այնքան կյանք ու մթնոլորտ կա, որ պարզապես ամոթալի է այդ վիճակում թողնել»:

Երիտասարդական պալատի բեմը, որտեղ վերջին տասը տարիների ընթացքում ելույթ է ունենում Ստեփանակերտի դրամատիկականը, բավական փոքր է: Բայց միևնույն է, թիմն ամեն օր փորձերի է, օր է եղել՝ չեն զգացել, թե ինչպես են այնքան տարվել, որ մինչև գիշերվա երեքը փորձ են արել:

«Գաղթական թատրոն լինելը շատ վատ բան է,– ասում է Վահագնը,– դու տուն ունես, բայց այն քանդված է, իսկ մշակույթը քո երկրի արտացոլանքն է: Այսպիսին է մեր արտացոլանքը»:

Համ կա, համ չկա

Լուսանկարիչ Արեգ Բալայանը նախ երեխա եղած ժամանակ եկել է Ստեփանակերտի Թատրոն որպես հանդիսատես: Արդեն տարիներ հետո, երբ կիսաքանդ Թատրոնում Արցախի առաջին արվեստի փառատոնն անցկացվեց, Արեգն այնտեղ ներկայացավ ֆոտոպերֆորմանսով: Թատրոնի երիտասարդ դերասանները հին ներկայացումներից դրվագներ էին խաղում, իսկ նա «շարժական» լուսանկարներ էր անում: «Նախագիծն այն մասին էր, որ Թատրոնը համ կա, համ չկա,– պատմում է Արեգ Բալայանը,– շենքը գոյություն ունի, բայց ներսից չկա, ներսում կան մարդիկ, բայց այն դատարկ է»:

Այս նախագիծը տեսան ԱՅԲ դպրոցի f8 լուսանկարչական ակումբի աշակերտները, որը ղեկավարում էր Արեգը: Եվ ահա, հերթական նախագիծը որոշեցին նվիրել Թատրոնի շենքին: Երեք օրով մեկնեցին Ստեփանակերտ՝ ուսումնասիրելու ու լուսանկարներ անելու: «Խոնավություն, բորբոսնած պատեր, աստիճաններ... Առավոտից գիշեր նկարում էինք, ես հիմնականում զբաղվում էի դիմանկարներով, իսկ երեխաները նկարում էին շենքի դուրսն ու ներսը»,– պատմում է Արեգը: Իրենց հետ մի մեքենա տեխնիկա էին վերցրել և ամբողջ ընթացքում աշակերտները նաև սովորում էին օգտվել այդ բոլորից: Թիմը բաժանվել էր երկու մասի: Մի մասը գնաց Երիտասարդության պալատ՝ Թատրոնի թիմին խոսեցնելու, մյուս մասն էլ գնաց ուսումնասիրելու Թատրոնը:

Նախագծի լուսանկարներում դերասաններից ու տեխնիկական անձնակազմից բացի հայտնվեց նաև մի պապիկ, որին ժամանակին պատվավոր հանդիսատեսի կոչում էին տվել: Երեխաները նրա մասին իմացան Թատրոնի թիմի հետ զրույցների ընթացքում ու շատ արագ գտան իր կրպակը, որտեղ նա դանակներ է սրում: Սկզբում նրան հրավիրեցին Թատրոն, իսկ հետո նրա տարածքում էլ նկարեցին:

Երբ վերադարձան Երևան, այս ֆոտոպատմությունն ու այլ նախագծերը ներկայացվեցին ցուցահանդեսի ժամանակ: Ցուցահանդեսի ընթացքում նաև քննարկում անցկացրին մասնագետների ու թատերական գործիչների հետ: Այս ամենի գլխավոր նպատակը խնդրին ուշադրություն սևեռելն էր, անել հնարավոր ամեն բան, որպեսզի Ստեփանակերտի Թատրոնը նորից լինի:

Մարգարիտ Միրզոյան

ԱՅԲ դպրոցի f8 լուսանկարչական ակումբի աշակերտներ / Արեգ Բալայան

Աչքի պես.

«ԵՐԲ ՈՐ ՔԱՄԻՆ ՀԱՆԴԱՐՏՎԻ...»

Ինչպես ռեժիսոր Նորա Մարտիրոսյանը Ստեփանակերտի օդանավակայանի մասին ֆիլմ նկարահանեց, որն ընդգրկվեց Կաննի կինոփառատոնի պաշտոնական ծրագրում ու վավերագրեց 2020-ից հետո արդեն կորսված շատ տարածքներ: Պատմում է «Երբ որ քամին հանդարտվի ֆիլմի» հեղինակը:

Թռչելու անհագ ցանկությունը

Առաջին անգամ Արցախ գնացի 2009 թվականին: Արցախցիների կյանքի պարադոքսը պարզապես ապշեցուցիչ էր: Ես որոշեցի մի ֆիլմ գրել, որը կփորձի խոսել այդ պարադոքսի մասին: Սկզբում հիմքում ավելի սոցիալական պատմություն էր, բայց կենտրոնում միշտ կար ֆրանսիացի հերոսը, որը գալիս էր Ղարաբաղ ու իմ պես բացահայտում էր Ղարաբաղը:

Օդակայանը պատմության մեջ հայտնվեց կարծեմ երկու տարի անց՝ 2011-ին, երբ բացվեց այդ նոր շենքը: Առաջին անգամ այցելեցի օդակայանի տնօրեն Դմիտրի Աթբաշյանի ուղեկցությամբ: Հրաշալի մարդ էր, մինչ այդ եղել էր «Զվարթնոցի» տնօրենը: Հիշում եմ, այդ օրն ինձ պատմեց իր նախնիների զարմանալի պատմությունը, որոնք մի դար առաջ փախչել էին Արևմտյան Հայաստանի ջարդերից, իսկ ահա հիմա նա ամեն ինչ թողել ու եկել էր Ստեփանակերտ՝ այս նոր օդակայանը ոտքի կանգնեցնելու համար: Շատ հայրենասեր, նվիրված, ճիշտ մարդ էր:

Էնպես ստացվեց, որ ընդհանուր ծանոթներ գտանք: Արցախը, չեք պատկերացնում, ի՜նչ փոքր էր այդ իմաստով: Ֆիլմում նույնիսկ մի խոսք կա՝ «Ղարաբաղը կլոր է, ուր էլ գնաս, վերջում նույն տեղն ես հասնելու»: Ես էնպիսի ապշելու անակնկալ հանդիպումներ ունեցա այդ տասը տարիների ընթացքում, որոնց աշխարհում ոչ մի տեղ չէի հանդիպի:

Շատ ոգևորված էր Դմիտրի Աթբաշյանը, ցույց տվեց ինձ շենքը, ասաց, որ արդեն հաջորդ տարի կժամանի առաջին ինքնաթիռը, հետո դուրս եկանք չվերթուղի, շրջեցինք տարածքով: Թվում էր, որ հեսա-հեսա, արդեն բան չի մնացել, ինքնաթիռները կթռչեն: Բայց օդակայանը 2012-ին չգործեց, 2013-ին չբացվեց... Իսկ ես ամեն տարի գնում էի Արցախ ու իմ աչքերով տեսնում այդ անհագ ցանկությունը թռչելու, ուրեմն նաև՝ ճանաչվելու, և փորձեցի գրել էնպիսի սցենար, որտեղ կարտացոլվի այդ ցանկությունը և այդ ցանկության արդեն, ցավոք, ակնհայտ անհնարինությունը: Հասկացա, որ պատմությունը պիտի շրջվի հենց օդակայանի շուրջ: Այդպես հայտնվեց ֆրանսիացի մասնագետը, որը զննում է շենքը, և երեխան, որը օդակայանի զուգարաններից ջուր է հավաքում:

Հավատը

Զարմանալի մի շենք է: Ֆիլմի մեջ առաջին անգամ, երբ ֆրանսիացի հերոսը տեսնում է օդակայանը, տաքսու վարորդն ասում է՝ «տե՛ս, արծիվի նման է»: Արծիվ է, որը չի սավառնում:

Առաջին տարին, երբ ես գնացի, հիսունից ավելի աշխատող ունեին: 2018-ին, երբ նկարահանում էինք, քանակը կրճատվել էր, բայց միևնույն է՝ օդակայանի սովորական անձնակազմ էր: Եվ այդ մարդիկ հենց էնպես չէին գալիս, իսկապես հավատում էին, որ հայ-հայ, արդեն շուտով կսկսենք ճանապարհել ու դիմավորել: Ֆրանսիայում ֆիլմը դիտելուց հետո ինձ մի քանի անգամ հարցրել են, թե ո՞նց է հնարավոր, որ մարդիկ այդքան միամիտ լինեն: Բայց ինձ թվում է, որ եթե դու ամուր ռեալիստ ես, դու չես կարող Արցախում ապրել: Միամտություն ասելով նկատի ունեմ երբեմն բացարձակ անհիմն հույսի ուժը:

Ինձ համար շատ կարևոր էր պատմությունը պատմել հենց դրսից եկածի հայացքով, քանի որ ես ինքս էլ դրսից եկած էի: Բայց սցենարը գրելիս հասկացա, որ եթե ունենամ միայն այդ ֆրանսիացու պատմությունը, ապա չեմ կարողանա ցույց տալ Արցախն ամբողջությամբ: Աստիճանաբար պատմության մեջ մտան այլ կերպարներ: Կերպարները տարբեր էին, բայց ամեն մեկն ուներ իր շատ ուժեղ հավատքը: Ինչպես երեխան, ով ջուր է վաճառում, որ հող առնի ու ցորեն ցանի: Կամ զինվորը, ով հավատում է, որ պետք է պատրաստ լինել պատերազմին, որը մի օր հաստատ նորից բռնկվելու է (Վարդան Պետրոսյանը պատերազմից հետո ինձ ասեց՝ Նորա, ո՞վ էր մտածում, որ ճիշտը ես եմ դուրս գալու՝ նկատի ունենալով պատերազմին պատրաստվող իր կերպարին): Վարորդ Սեյրանը, ով հավատում է, որ եթե հողը չես աշխատեցնում, ուրեմն միտք չունի այդ հողերին տիրելը: Այդպես, այս տարբեր տեսանկյուններից կառուցվեց իմ ֆիլմի Արցախը:

Երևի ես էլ միամտորեն հավատում էի, որ պիտի նկարեմ այս ֆիլմը: Տասը տարի ամեն օր արթնանում էի այդ մտքով ու այդ երազանքով, առաքելություն էր դարձել ինձ համար:

Օրենքից դուրս ֆրանսիացիները

Նախքան նկարահանումները սկսելը, մենք հանդիպում ունեցանք Ֆրանսիայի դեսպանատանը, քանի որ անձնակազմի մի մեծ հատվածն այդ երկրի քաղաքացիներ էին: Մեզ զգուշացրեցին. այն պահից, երբ դուք անցնեք Արցախի սահմանը, դուք կհայտնվեք օրենքից դուրս: Մենք չենք կարող ձեզ թույլ տալ կամ արգելել, բայց նաև չենք կարողանա որևէ կերպ աջակցել, եթե մի բան պատահի: Բարեբախտություն էր, որ մեզ հետ հայկական կողմից աշխատում էր պրոդյուսեր Անի Ոսկանյանը՝ Մոսկվայում սովորած անվախ մի պրոֆեսիոնալ, ով հրաշալի կազմակերպեց այդ ողջ գործընթացը: Իհարկե, կար հյուրանոցի խնդիր. երկու ամիս հիսուն հոգով տեղավորվելու համար երկու հյուրանոց զբաղեցրինք: Թերևս, ամենօրյա աշխատանքում միակ խնդիրը ժամանակի զգացողությունն էր: Ֆրանսիայում, երբ ժամը 9-ին նշանակվում է աշխատանքի սկիզբը, ուրեմն ժամը 9-ին բոլորը տեղում են ու անցնում են աշխատանքի. սպասարկման թիմն արդեն տեղում է, սուրճն էլ՝ պատրաստ:

Արցախը, չեք պատկերացնում, ի՜նչ փոքր էր այդ իմաստով: Ֆիլմում նույնիսկ մի խոսք կա՝ «Ղարաբաղը կլոր է, ուր էլ գնաս, վերջում նույն տեղն ես հասնելու»

Իսկ մեր նկարահանումների ժամանակ ժամը 9-ին սպասարկման թիմը միայն կամաց-կամաց հասնում է տեղ... Ինչևէ, լավ է, որ կար Անիի երկաթե բռունցքը:
Ֆիլմի գլխավոր հինգ դերակատարներից բացի մնացած բոլորը տեղում՝ Արցախում ընտրված ոչ պրոֆեսիոնալ դերասաններ են: Ամեն ինչ արեցի, որ այնտեղ իմ ձեռք բերված ծանոթներն այս կամ այն կերպ ներգրավված լինեն ֆիլմում: Առաջին տեսարանում ֆրանսիացի հերոսին Ստեփանակերտ բերող վարորդը, օրինակ, Զյաձ Գրիշան է, ի դեպ, Բաքվից փախստական, ով օդակայանի հրշեջ խմբի պետն էր:
Երկխոսություններն էլ մեծամասամբ ծնվել են օդակայանի աշխատողների հետ իմ իրական զրույցներից:

Կառավարելի կրակ
Ֆիլմում օդակայանի տարածքում հրդեհի տեսարան կա: Սովորաբար, օդակայանին կից տարածքներում արհեստական հրդեհներ են իրականացնում, որպեսզի տարածքը մաքրվի ու չնախատեսված հրդեհի դեպքում չհասնի բուն օդակայանի ենթակառուցվածքին: Ֆիլմում էլ նախատեսվում էր նման տեսարան: Նախօրոք պայմանավորվել էինք Զյաձ Գրիշայի հետ, որ էս տարի հունիսին նախատեսված հրկիզում չիրականացվի, այլ սպասեն մինչև օգոստոս ու իրականացնեն մեր նկարահանումների ժամանակ: Պիտի նկարեինք երկու տեսարանով: Առաջինը՝ աշտարակից՝ ֆրանսիացի հերոսի տեսանկյունից: Երկրորդն արդեն ներքևից, չվերթուղու կողմից: Շատ լավ պատրաստվել էինք, առանց որևէ խնդրի նկարահանեցինք առաջին տեսարանն ու գնացինք ճաշի ընդմիջման: Ու էդ ընթացքում մի էնպիսի անձրև եկավ, էնպես ամեն ինչ թրջեց, որ հնարավոր չէր այլևս երկրորդ տեսարանը նկարահանելը, խոտը պարզապես չէր այրվում: Ժամանակ էլ չունեինք, մյուս օրն արդեն բոլորովին ուրիշ տեղում էինք նկարահանելու...
Բայց թիմը չհանձնվեց, տղաները նավթ գտան ու կարողացան հրդեհի տեսարան ստեղծել, իհարկե, ոչ ամբողջ դաշտն այրելով, այլ հատուկ գծային լուծում տվեցին: Հիշում եմ, դեռ դրանից առաջ, երբ ֆրանսիացի ներդրողների հետ էինք քննարկում, սցենարը կարդալիս զարմանում էին՝ որտեղի՞ց մեզ այսքան գումար, որ հրդեհի տեսարան նկարենք, չէ՞ որ պետք է պոստ-պրոդաքշնում թվային կրակ նկարենք: Բայց ինչպես պարզվեց, կրակի համար պետք

Ստեփանակերտի օդակայան
Ստեփանակերտի օդակայանը կառուցվել է 1974 թվականին, հիմնականում չվերթներ է ընդունել Երևանից և Բաքվից: Արցախյան ազատամարտի սկզբում այն ծառայել է ռազմական նպատակով, 1992-ից հետո չի օգտագործվել:
2008-ին սկսվել է օդակայանի նոր գլխավոր մասնաշենքի կառուցումը (ճարտարապետ՝ Տիգրան Բարսեղյան): Նորացվել և լայնացվել է թռիչքուղին, ինչպես նաև հարթեցվել են թռիչքուղուն հարակից մի քանի բլուրների գագաթները՝ ժամանակակից մեծ ինքնաթիռներ ընդունելու համար: Սկզբնական շրջանում թռիչքներ են նախատեսվել Երևան-Ստեփանակերտ և հակառակ ուղղություններով: Վերաբացումը նախատեսվում էր 2011 թվականի մայիսին 9-ին, սակայն մի քանի անգամ հետաձգվել է: 2020 թվականի պատերազմից հետո օդակայանը գործարկում են ռուս խաղաղապահները:

էին ընդամենը կյանքի փորձ ունեցող արցախցի տղաներ:
Չմոռանամ նշել, որ նկարահանման ողջ ընթացքում Արցախի կառավարությունից որևէ խոչընդոտի չենք հանդիպել, մշտապես բոլոր անհրաժեշտ թղթերն ու թույլտվությունները ժամանակին ստացել ենք, ու այդ իմաստով մեր գործը բավական հեշտ էր: Միայն մի տեսարան տուժեց, պիտի Բերձորի սահմանում նկարահանեինք առավոտ շուտ, բայց անցակետում ճիշտ ժամին դեռ չէին ստացել կարգադրությունները: Մի քիչ փոփոխեցինք տեսարանն ու վերջ:
Հիշում եմ, նկարահանելիս առաջարկ կար դրոններ օգտագործել, կամ փոքր ինքնաթիռների օգնությամբ վերևից նկարել: Բայց ամբողջ իմաստն այն էր, որ եթե ինքնաթիռները չեն կարող թռչել այդ օդակայանից, ուրեմն դիտողն էլ պետք է ամեն ինչ տեսնի ներքևից, հողին կպած վիճակից, ինչպես որ հողին են կպած արցախցիները:

Քամին չհանդարտվեց

Երևանյան պրեմիերան տեղի ունեցավ 2021 թվականի մարտին, պատերազմից հետո: Եվ ֆիլմում նկարահանված ահագին տարածքներ այդ ժամանակ արդեն կորսված էին: Ակնաղբյուր գյուղը, Շուշին... Եվ ահա, դիտողները նայում ու տեսնում էին իրենց տները, որտեղ այլևս չէին վերադառնալու:
Ցավոք, ոչ բոլորը կարողացան Երևան ժամանել, ու Ստեփանակերտի օդակայանի աշխատողներն արդեն այս տարվա հուլիսին ֆիլմը տեսան՝ իրենց քաղաքում: Շատ տեղերում ենք ցուցադրել ֆիլմը, կինոյի համար կարևոր տեղերում, մրցանակներ եղան, բարձր գնահատականներ հնչեցին: Բայց այնպիսի հուզիչ դիտում, ինչպիսին եղավ Ստեփանակերտում, երբեք չէր եղել: Ֆիլմի ճամփորդությունը, կարծես սկսվելով Ստեփանակերտում, ավարտվեց նորից Ստեփանակերտում: Ֆիլմը հասավ տուն:
Առաջին շարքում նստած էին ֆիլմում խաղացող երեխաների մայրիկները: Իսկ տղաներն արդեն մեծացել էին, արդեն ծառայում էին: Ակնաղբյուրից երեք տատիկ էր եկել, նրանցից մեկն իմ մոտ ընկեր Դավիթ Օհանյանի մայրիկն էր: 2020-ի նոյեմբերին Դավիթը մեքենայով եկել-տարել էր մայրիկին ու զոքանչին՝ ասելով, որ ոչինչ չվերցնեն իրենց հետ, շուտով վերադառնալու են:
Տեղի կառավարության անդամներից մարդիկ կային պրեմիերային: Ֆիլմը դիտելուց

ԵՐԲ ՈՐ ՔԱՄԻՆ ՀԱՆԴԱՐՏՎԻ, 2020

Արտադրող երկրներ՝ Հայաստան, Բելգիա, Ֆրանսիա
Ռեժիսոր՝ Նորա Մարտիրոսյան
Դերերում՝ Գրեգոար Քոլին, Հայկ Բախրյան, Արման Նավասարդյան, Դավիթ Հակոբյան, Վարդան Պետրոսյան, Նարինե Գրիգորյան

Ազգությամբ ֆրանսիացի օդակայանների աուդիտոր Ալենը ժամանում է Արցախի Հանրապետության՝ բոլորովին նոր կառուցված օդակայան: Ալենը պետք է ուսումնասիրի, թե արդյո՞ք վերաբացվելու համար այս օդակայանը համապատասխանում է միջազգային նորմերին: Օդակայանի աշխատակիցների հետ զրույցների ընթացքում նա հետզհետե հայտնաբերում է մի երկիր, որը որոշ քարտեզների վրա նույնիսկ նշված չի, բայց որն իրականում գոյություն ունի իր բնակիչներով, իր կառավարությամբ, իր համակարգերով, իր մշակութային դաշտով:

Ֆիլմում նկարահանված ահագին տարածքներ այդ ժամանակ արդեն կորսված էին: Եվ ահա, դիտողները նայում ու տեսնում էին իրենց տները, որտեղ այլևս չէին վերադառնալու

հետո նրանցից մեկն ինձ ասաց՝ գիտես, եթե մինչև պատերազմը տեսած լինեինք, գուցե նեղանայինք, որ այդքան հոռետես ես պատկերել իրավիճակը: Բայց արի ու տես, փաստորեն, իրականից ավելի լավատես էր ստացվել:
Դմիտրի Աթբաշյանը, ցավոք, վերջնական արդյունքը չտեսավ, կյանքից հեռացավ, երբ դեռ մոնտաժում էինք ֆիլմը:
Օդակայանում աշխատող ամբողջ թիմն էր եկել, իհարկե: Այդ ժամանակ այն արդեն անցել էր ռուս խաղաղապահների ձեռքը: Աշխատանքի մասին հարցուփորձ անել չէի կարող արդեն: Փաստորեն, որոշակի իմաստով, օդակայանն աշխատեց: Բայց, իհարկե, ոչ այնպես, ինչպես բոլորս սպասում էինք այս տարիների ընթացքում:

Արտավազդ Եղիազարյան
Նորա Մարտիրոսյանի անձնական արխիվ, ՊանՖոտո/Արեգ Բալայան

Էքսպատներ. Արցախին սիրահարվածները

Նրանց արմատներում առաջին հայացքից Արցախ տանող ոչ մի թել չկա, կյանքի նախնական սցենարներում չէր էլ ենթադրվում, որ մի օր իրենց կյանքը չեն պատկերացնի առանց այս հողի: Մեկ անգամ այցելած ու մեկընդմիշտ ճակատագիրն Արցախի հետ կապած մարդիկ պատմում են՝ ինչպես սիրահարվեցին մեր մեծ հայրենիքի այս փոքրիկ, բայց կարևորագույն կետին:

Տիգրան Սուչյան

Արցախի պետական ջազ նվագախմբի ղեկավար

Պատերազմից հետո եկանք վարպետության դասեր անցկացնելու, հետո նորից եկանք, հետո մի քանի անգամ էլ եկանք ու վերջ, արդեն Արցախում եմ ապրում: Իրականում դեռևս ամսվա կեսը Արցախում եմ, մյուս կեսը՝ Երևանում: Իսկ եթե ավելի ստույգ, ապա եթե կարևոր համերգ չկա երևանում, ես ամեն վարկյանը փորձում եմ Արցախում անցկացնել:

Երբ ինձ առաջարկեցին լինել ջազ նվագախմբի ղեկավար, ինքնին նվագախումբ դեռ չկար: Մրցույթ հայտարարեցինք, դիմորդներն այնքան քիչ էին, որ անցանք տեղի մենթալիտետին բնորոշ տարբերակների՝ սկսեցինք հարց ու փորձ անել: Ու շատ արագ հավաքեցի երաժիշտներին:

Պարզվեց՝ տաղանդավոր երաժիշտներ շատ կան, բայց բավականաչափ փորձ չունեին: Արվեստով այստեղ շատ չեն զբաղվում, բոլորը զինվորական են:

Եթե վերջապես հաստատվի խաղաղություն, վստահ եմ՝ մեր նվագախումբը մեծ արդյունքներ կարող է ունենալ, երաժիշտներիս պոտենցիալը մեծ է: Բայց խաղաղության համար պետք է առնվազն քսան տարի ոչ մի կրակոց չինչի:

Արցախ գալու իմ մոտիվացիան պարզ է, ես այլ կերպ չէի կարող, ես չէի կարող մերժել առաջարկը, եթե տեսնում եմ՝ որքան շատ կա իմ՝ որպես մասնագետի, կարիքն այստեղ: Արցախը փոքր է, բոլորը բոլորին գիտեն, հիմա արդեն նաև ինձ են ճանաչում: Բայց սկզբում շատ էին հարցնում՝ հայաստանցի՞ ես: Միշտ պատասխանել եմ, չէ, ես երևանցի եմ: Ու հետո երկար զրույցներ այն մասին, որ չկա հայաստանցի, ղարաբաղցի, սաղս էլ հայ ենք ու վերջ:

Գալուց առաջ ես էլ էի մտածում, որ Արցախում բոլորը կռվող են, զինվորական ի ծնե: Այստեղ ապրելով տեսա, որ դա հարկադրաբար են անում, իսկ իրականում արցախցին ուզում է և՛ ջազ լսել, և՛ հանգիստ ապրել ու ստեղծագործել: Ես ինքս կռվող չեմ, հազար ներողություն, բայց ես դեմ եմ պատերազմներին: Ու եթե նույնիսկ զինվոր եմ, ապա արվեստի դաշտի, ես կարող եմ հաղթել բեմով, ելույթներով, հյուրախաղերով: Արցախին ես նվիրում եմ իմ զենքը՝ երաժշտությունը:

Ու հավատում եմ երաժշտության մոգական ուժին, այն մերձեցնում է բոլորին, հարթում սուր անկյունները:

Յակոբ Իփճեան

Արցախում մարդասիրական և բարեգործական ծրագրերի ղեկավար, Պետնախարարի խորհրդական

Մոտ 2 տարի է՝ Արցախում եմ: Ծնվել և հիմնական կրթություն ստացել եմ Կիպրոսում, այնուհետև իրավաբանություն և հաշվապահություն ուսուցանել Լոնդոնում: Պատերազմից անմիջապես հետո ընկերներով որոշել ենք տեղափոխվել Հայաստան օգնություն ցուցաբերելու համար: Զբաղվում էինք պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված հայրենակիցների խնդիրներով՝ համագործակցելով ՀՀ-ում գործող Արցախի օպերատիվ շտաբի և տարբեր կամավորականների հետ: Հիմնականում ֆինանսական աջակցություն էինք ցուցաբերում պատերազմի ընթացքում վիրավորված, ինչպես նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը՝ մեր խումբը որոշեց տեղափոխվել Արցախ և ծրագրերն իրականացնել տեղում: Սկզբնական փուլում անհրաժեշտ օգնության ուղղությունը հումանիտար բնույթի էր՝ սննդի և հիգիենայի պարագաների տեսքով, որից օգտվեցին սահմանամերձ համայնքների 400-ից ավելի ընտանիք:

Պատերազմի ժամանակ ամենօրյա ռեժիմով կապվում էինք Արցախում բնակվող մեր ընկերների հետ և ճշտում հիվանդանոցներում անհրաժեշտ բժշկական սարքավորումների ցանկերը: Կիպրոսի հայ համայնքի ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր դարձավ ձեռք բերել նշված սարքավորումները, իսկ Արցախի օժանդակության մարմին հիմնադրամի հետևողականության շնորհիվ այն հասցնել Արցախ: Մեր խումբն աշխատում էր գրեթե բոլոր գերատեսչությունների հետ, շատ արագ հասկացանք, որ անհրաժեշտ է երկարաժամկետ ծրագրեր առաջարկել: Այդպես, օրինակ, իրականացրեցինք ջերմոցների կառուցում Ասկերանում, Բերքաձորում և Մարտակերտում, այնուհետև 31 ընտանիքի բաժանեցինք 93 մեղվի փեթակ: Այս ծրագրերը կյանքի կոչելուց առաջ նախօրոք ուսումնասիրում էինք տարածաշրջանում զարգացած ոլորտը, որպեսզի ավելի արդյունավետ լինի: Օրինակ Շուշիի շրջանի Լիսագոր, Եղցահող համայնքներում շատ զարգացած էր մեղվագործությունը: ԱՀ սահմանամերձ համայնքներում 26 000 ճուտ և համապատասխան քանակի կեր բաժանեցինք, որ տեղացիներն իրենց ֆերմաները ստեղծեն: Նշված բոլոր ծրագրերն իրականանում էին Սփյուռքի դրամահավաքների, անհատ դոնորների օգնությամբ, որոնց մեծ մասը այլազգի էին, ու, պարզապես վստահելով մեզ, պատրաստակամ էին օգնել: Մեր աշխատանքների հիմքում ներդրված էր շատ կարևոր սկզբունք՝ նույն մարդը երկու անգամ չպետք է շահառու դառնա, ընդ որում՝ ոչ միայն չկարողանա, այլև հենց ինքը չցանկանա:

Պետական կառույցների պատասխանատուների հետ հանդիպումներից մեկի ժամանակ առաջարկ ստացա աշխատել Արցախի պետական նախարարի թիմում որպես խորհրդական: Հասկանալով Սփյուռքի ներուժի փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ համաձայնեցի աշխատել հասարակական հիմունքներով: Առ այսօր փորձում եմ տեղայնացնել իմ գիտելիքներն ու հմտությունները:

Արցախցիները սփյուռքահայերին շատ լավ են ընդունում, ինտեգրման խնդիր բացարձակ չկա: Տնային այցերի ժամանակ գրեթե բոլորը անպայման իրենց այգու բերք ու բարիքից են հյուրասիրում: Սկզբում արցախյան բարբառն ընդհանրապես չէի հասկանում, իսկ այսօր հանգիստ շփվում եմ:

Երկար եմ մնում աշխատանքի վայրում, մինչև կեսգիշեր: Մենք վարժված ենք, որ մինչև գործը չավարտես, չես կարող տուն գնալ, օրենքով սահմանված աշխատանքային ժամը մեզ համար չէ: Այս սկզբունքը պետք է գործի նաև Արցախում, քանի որ այստեղ շատ, անթիվ, անվերջ գործ կա անելու:

Արցախում ապրելու ընթացքում հասցրել եմ այցելել 64 համայնքներ, ծանոթանալ նրանց նիստ ու կացին: Ու հստակ օրինաչափություն եմ նկատել՝ մարդիկ չեն տեղաշարժվում, նույնիսկ կողքի համայնք երբեք չեն այցելել, փաստացի տեղյակ չեն իրենց երկրից, չեն ճանաչում Արցախը: Այս տարի ամռանը շատ մեծ թվով սփյուռքահայեր եկան ՀՀ, բայց նրանց տասը տոկոսն էլ չայցելեց Արցախ: Դա շատ ցավալի է:

Սփյուռքը երեսուն տարի փոխանակ գա ու այստեղ ապրի, շենացնի այս բերրի հողը, ընդամենը փող էր փոխանցում, որ խիղճը հանգստացնի:

Փողից առավել Արցախին այսօր անհրաժեշտ է մտածելակերպի փոփոխություն, սփյուռքի հետ հաղորդակցվելիս միշտ հորդորում եմ տեղափոխվել Արցախ: Եթե քսան հոգի այլ մտածելակերպով, մոտեցումներով տեղափոխվի ու տարբեր նախարարություններում աշխատի, Արցախը կարող է դառնալ Դուբայ: Իհարկե, եթե չգան էլ, միևնույն է՝ կամաց-կամաց կփոխվի, ես վստահ եմ, ամենակարևոր ձեռքբերումն արդեն ունենք. արցախցին որոշել է մնալ ու ապրել այստեղ: Իսկ այստեղ դժվար է ապրել, իրոք, դժվար է:

Ժողովուրդն այստեղ գերզգացմունքային է, ու բնավ հեռատես չէ, ցավոք: Ընդհանուր տեսարանը շատ քիչ մարդ է տեսնում, չեն հասկանում՝ մի նախագիծն ինչպես է բացում մեկ այլ նախագծի ճամփան: Մենք ոչ թե մատնանշում ենք խնդիրն ու մի կողմ քաշվում, այլ լուծումներ ենք առաջարկում: Խնդիրները պետք է լուծել, ոչ թե խոսել դրանց մասին՝ ինչպես վերջին երեսուն տարին:

Խաչատուր Հայրապետյան

Թումոյի Արցախի գրասենյակի ղեկավար

2021-ի դեկտեմբերից Արցախում եմ, դրանից առաջ յոթ տարի Թումոյում դասընթացավար էի, հետո կնոջս առաջարկով որոշեցի տեղափոխվել Արցախ: Միշտ գալիս է այն ակնթարթը, երբ զգում ես, որ արդեն պետք է փոխես կյանքդ: Արցախն անծանոթ վայր չէր ինձ համար, ես ծառայել եմ այստեղ, ընկերներ ունեմ: Մտավախություն ունեի, որ կնոջս սրտով չի լինի, բայց պարզվեց՝ երկուսս էլ զրոյացանք ու փոխեցինք մեր կյանքը: Մեզ հետ՝ նաև մեր երեխան: Առաջին խնդիրը, որին բախվեցինք, ադապտացիան էր տեղի մշակույթին, մենթալիտետին ու նաև լեզվին: Կինս շատ արագ սիրեց արցախցիներին, առանց լեզուն հասկանալու միանգամից լեզու գտավ: Իմ հարցն ավելի հեշտ էր, արցախցի երեխաներին հաճախ եմ տեսել այստեղ անցկացրած դասընթացների ժամանակ, շատերին էի ճանաչում: Աշխատանքի մեջ էլ բարդություն չեղավ, ամենուր նույն խնդիրներն են ու նպատակները: Ծնողներն էլ ամենուր նույն խնդիրն ունեն. չեն հետաքրքրվում իրենց երեխայի հույզերով, մտքերով, չեն լսում ցանկություններն ու երազանքները: Մոտ 1100 երեխա է հիմա հաճախում Թումո, բայց հաստատ գիտեմ, որ դա չի մեր պոտենցիալը: Հաբը Ստեփանակերտում է, փետրվարին բացեցինք բոքսեր Մարտունիում, Մարտակերտում, հետո Ասկերանում: Այս փոքր Արցախում տեղաշարժման խնդիրներ կան՝ ճանապարհներ, տրանսպորտ: Դպրոցներում էլ բավականաչափ տեղյակ չեն՝ ինչ է Թումոն: Հաճախ եմ ինքս հավաքում տեխնիկան ու գնում ենք որևէ դպրոց՝ ծնողների հետ հանդիպման: Այո, այստեղ սարն է գնում Մուհամեդի մոտ: Այդպիսի մի հանդիպման գնալիս նեղ ճանապարհով անցնելիս ադրբեջանական մեքենան հանդիպակաց քշեց ու մեզ գլորեց ձորը: ՁԼՄ-ներով էլ գրեցին այդ մասին, մեծ

արձագանք եղավ: Ինչևէ, բարեբախտաբար, շատ չտուժեցինք, արագ հավաքվեցինք, առաջինը զանգեցի դպրոցի տնօրենին, խնդրեցի ծնողներին սպասել ևս մեկ ժամ, մինչև գանք, հասնենք: Երկրորդ զանգով տեղեկացրեցի միջադեպի մասին մեր կենտրոնին ու նոր մեքենա խնդրեցի: Պատկերացնում եք, որքան մեծ էր մեր վիհատությունը, երբ վթարից հետո ժամ ու կես ուշացումով մենք, այնուամենայնիվ, հասանք շրջանի դպրոց ու պարզվեց, որ մոտ հիսուն ծնողից մեզ սպասել էր ընդամենը տասներկուսը:

Բայց հիասթափվելը, թևաթափ լինելը Արցախի մասին չէ, այստեղ նման բառերը պարզապես տեղ չունեն: Անդադար ինչ-որ նախագծեր ենք կյանքի կոչում, համագործակցում ուրիշ կառույցների հետ: Վերջերս Սիվիլնեթը լըրնինգ լաբ արեց, մեր սաներին վերապատրաստեցին, նրանցից մեկը նույնիսկ ընդունվեց աշխատանքի հենց Սիվիլնեթ, հիմա օպերատոր է: Արցախում էլ, ՀՀ-ում էլ անսահման հետաքրքիր, առաջադեմ սերունդ է մեծանում՝ ոչ ստանդարտ մտածելակերպով ու խնդիրներին այլ լուծումներ տալով: Ես նրանց հաճախ եմ լսում, սովորում նրանց չափ կաղապարներից դուրս մտածել: Ես հավատում եմ մեր սերնդին: Ու շատ կուզեմ, որ երեխաների ծնողներն էլ իմ պես հավատան:

Իմ ապագան Արցախում է այնքան ժամանակ, քանի դեռ պետք եմ Արցախին: Միգուցե ոչ ականջահաճո ինչի, բայց պետք է անկեղծ ասեմ, ես խաղաղությանը չեմ հավատում: Բայց արդարությանը հավատում եմ:

Զաքար Քեշիշյան

Շուշիի «Վարանդա» երգչախմբի ղեկավար

Ծագումով մուսալեռցի եմ, ծնողներս հետո Այնճար են տարագրվել, ես ապրել եմ Լիբանանում, 88-ին ընդունվեցի Երևանի պետական կոնսերվատորիա, ամիսներ անց շարժումը սկսվեց: 89-ի ապրիլի երեքին մի խումբ ուսանողներով եկանք Արցախ համերգների: Օրական 4-5 համերգ էինք տալիս՝ երաժշտական ուսումնարանում, հիվանդանոցում, դպրոցներում, Մետաքսի գործարանում: Շատ շրջաններում եղանք՝ Մարտունի, Հադրութ, Մարտակերտ, Ասկերան, Շուշի չգնացինք, մերը չէր դեռ, միայն հեռվից էինք նայում՝ ինչպես հիմա: Երգում էինք Կոմիտաս, ես շվիով ժողովրդական երգեր էի նվագում: Մեր նպատակն էր ցույց տալ այստեղի ժողովրդին, որ Հայաստանը ձեզ հետ է: Համերգների ընթացքում կոչեր էին հնչում, «միացում» էինք ուզում: հաջորդ անգամ եկա 92-ին ու արդեն Շուշիում էլ համերգ ունեցանք: Այնքան լավ անցավ, որ որոշեցինք Շուշիում երգչախումբ հիմնել: Ինձ էլ նշանակեցին խմբավար: 92-ի նոյեմբերին եկա Շուշի ու մինչ այսօր անվերջ վերադարձի մեջ եմ, ամեն տարի առանց բացառության ամռանը ես այստեղ եմ արդեն 30 տարի:

Երեխաների հետ հենց առաջին հանդիպման ժամանակ հնչեց տագնապի ազդանշանը, դեռ պատերազմ էր ընթանում: Շուշիի Արամ Մանուկյան վարժարանում էինք, շատ վախեցա երեխաների համար, սկսեցի գոռալ «երեխաներ, իջեք վար»: Երկու պայթյուն եղավ, բարեբախտաբար զոհեր չեղան, բայց հենց գնացին ինքնաթիռները, երեխաները սկսեցին ձեռ առնել ինձ՝ «պարոն Զաքարը վախում ա, վախում ա»: Հասկացա, որ պետք է լինեմ իրենց պես անվախ: Հետո երբ էլի գալիս էին ինքնաթիռները, ես չէի համարձակվում վախենալ:

Սկզբում դժվար էինք հասկանում իրար, երեխաները ռուսախոս էին, բարեբախտաբար, մուսալեռի բարբառը նման է արցախյան դարձվածքներին, նույն գրաբարից է, մի կերպ հասկացանք իրար, մինչև սովորեցի: Միեկ լյոխ գյուղում ըմ: Ինձ գրավել էր ժողովուրդը: Մարդիկ՝ ինձ համար ընդունելի կամ անհասկանալի ավանդույթներով: Երեսուն տարի է՝ այստեղ եմ, վստահ կարող եմ ասել՝ արցախցիները բարի են ու հյուրասեր, պատվախնդիր ու հայրենասեր են, անդավաճան ընկերասեր են, լեռնեցի են՝ մարդկային բարձր արժեքներով:

Առաջին տասնհինգ տարին ձմռանը սարսափելի էր Շուշիի վիճակը, ջեռուցում չկար, դադարեցվում էին պարապմունքները: Ամռանն ակտիվանում էինք: Ես էլ ավարտում էի գործերս Բեյրութում, որտեղ նույնպես խմբավար եմ երկու երգչախմբում, ու գալիս էի Արցախ: Ծանր էր պատերազմից հետո Շուշիի կողքով անցնել ու չմտնել իմ այդքան պաշտելի քաղաք... Բայց հենց հասա Ստեփանակերտ, տեսա, որ կյանքը շարունակվում է, պարտավոր ենք ապրել: Անցյալ տարի միայնակ սփյուռքահայի կարգավիճակ ունեի: Հասկանում եմ, կան անձնագրային խնդիրներ: Հասկանում, բայց չեմ համակերպվում: Այս ժողովրդին սիրահարվելը հեշտ է, պարզապես պետք է ճանաչել նրանց: Տեսնել, շփվել հենց արցախցիների հետ, այլ ոչ թե շարունակել սեպ խրող քաղաքականությունը:

Արեգ Բալայան.
«Ստեփանակերտը հետաքրքիր ռեգեներատիվ հատկություն ունի»

ԵՐԵՎԱՆԸ գնացել էր լուսանկարիչ Արեգ Բալայանի տուն՝ լսելու իր ու մի քիչ նաև իր կնոջ՝ Լուսին Աթաբեկյանի Ստեփանակերտի մասին:

→ Արեգ Բալայանն ու իր Բլօքիկներից մեկը՝ Քարվաճառի անցակետից ոչ հեռու մի տան պատին



Ակացիաները
89-90 թվերին մամաս աշխատանքով գնաց Ղարաբաղ. իրենց ճարտարապետական գրասենյակը Ստեփանակերտում արվեստանոց էր բացել, ու մի քանի հոգով եկել էին աշխատելու: Թիմին կացարան էին հատկացրել մտավոր զարգացման խնդիրներով երեխաների գիշերօթիկ դպրոցում: Առանձին երկհարկանի շինություն էր՝ ներսում մի քանի բնակարան: Այդտեղ հա՛մ ապրում էին, հա՛մ աշխատում: Մոտ մի տարի հետո արդեն ես առաջին անգամ հայտնվեցի Ստեփանակերտում, իսկ 93-ին տեղափոխվեցինք ապրելու: Սկզբում արձակուրդներին էի գալիս Ստեփանակերտ, որովհետև դպրոց դեռ Երևանում էի գնում, բայց վեցերորդ դասարանի կեսերից արդեն դպրոցն էլ սկսեցի Ստեփանակերտում գնալ ու այդպես մինչև ավարտական դասարաններ:
Գիշերօթիկի բակն ամենաշատն էի սիրում. ֆուտբոլի մեծ դաշտ ուներ ու «տուռնիկներ»: Երևանում նման բան չէի տեսել: Ամեն տեղ ակացիաներ էին ցանած, ես էլ մտածում էի՝ դրանք լոբու ծառեր են: Դպրոցի դասերին էի մեկ-մեկ նստում, իրենց ճաշարանը գնում: Ամենահավեսը փայտամշակման դասերն էին. ինչ-որ հետաքրքիր ֆիգուրներ էինք սարքում: Ուսուցիչն էլ երեք տղա ուներ, որոնցից մեկը՝ Վարուժը, իմ տարեկիցն էր: Միասին ինչ ասես անում էինք, օրինակ՝ ակացիաների մեջ ապրող սարդերին էինք որսում:

Մայրաքաղաքից եկածը
Ստեփանակերտն ինձ համար փոքր քաղաք էր՝ շատ ծառերով: Ուր էլ գնայիր, տաքսին մի ռուբլուց ավել չէր նստում: Ինքնուրույն գնում էի քաղաքով ման գալու: Մի անգամ պտտվելով հասա ինձ անծանոթ տեղ: Այսօր գիտեմ, որ երաժշտական ուսումնարանի մոտ էի հայտնվել, բաց այն ժամանակ մտածում էի, որ ահագին հեռացել եմ: Մի մարդու մոտեցա ու հարցրի, թե «Սպեց շկոլան» որտեղ է: Տեսավ, որ գրական հայերենով եմ խոսում, հարցրեց՝ մայրաքաղաքի՞ց ես: Պատասխանեցի, որ այո, ու նա այդ պահին փողոցից տաքսի կանգնեցրեց ու ասաց վարորդին, որ ինձ տանի, հասցնի տեղ, քանի որ մայրաքաղաքից եմ: Տաքսիստն ինձ տարավ տուն ու նույնիսկ գումար չվերցրեց: Այդ տարիներին բոլորն էին այդպիսինը. Ստեփանակերտում Երևանից եկած մարդը «մայրաքաղաքից եկած» էր համարվում, բոլորը հարգանքով ու սիրով էին վերաբերվում: Մինչև կռիվը Ստեփանակերտը հենց այդպիսի քաղաք է եղել:
Իմ հիշողության մեջ ամեն ինչ փոխվեց նրանից հետո, երբ տվեցին Մարտակերտը: Արցախում չէին ասում «վերցրին», ասում էին «տվեցին»: Քանի որ համարվում էր, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանն են դա արել, մայրաքաղաքից եկածների նկատմամբ վերաբերմունքն արդեն փոխվեց, իսկ իմ կյանքն այնտեղ ահագին բարդացավ: Եթե դու գրական հայերենով էիր խոսում, քեզ ասում էին «կատու կռասկա տվող», այսինքն՝ «խաբեբա»: Դպրոցում, բակում, ամեն տեղ, որտեղ գրական էի խոսում, կռիվ էր սկսվում:
Կարուսելների այգու հետ կապված հիշողություններ կան հենց այդ շրջանից: Երբ առաջին օդային հարձակումը եղավ, այդ այգում էինք: Այնտեղ հորաքրոջս ու իր աշակերտների հետ էինք գնացել: Նա Տողի դպրոցում էր աշխատում ու տաղանդավոր երաժիշտ երեխաներին բերում էր Ստեփանակերտ, պահում մեր տանը, հետո օգնում, որ ընդունվեն երաժշտական ուսումնարան: Նրանց մեջ մի տղա կար՝ Սեգոն: Լավ մտերմացել էինք, որովհետև ընդհանուր բան ունեինք՝ երկուսս էլ այդ ժամանակ Ստեփանակերտի համար օտար էինք: Ես մայրաքաղաքից եկածն էի, ինքը՝ գյուղից:

↑ *Ստեփանակերտ Արցախի Թեմի առաջնորդարանին կից բակում*

← *«Ներս նայիր»*

20 որպե գրադների միջև
Հրետակոծությունները, իհարկե, սարսափելի էին, բայց ինչ-որ հետաքրքիր բան կար դրա մեջ: Ձայնից ճանաչում էի, թե ինչով են խփում: Վերջին պատերազմի ժամանակ դա ինձ օգնեց: Երբ Մարտունիում կրակի տակ ընկանք, երկրորդ հարվածից հասկացա, որ գրադով են խփում, ու որ շտապ պետք է մտնել որևէ պատի ետև: Գոռացի բարձր. վեց հոգով էինք, ամեն մարդ մտավ մի պատի տակ:
Շուշիից եկող հարվածները հստակ ժամանակային ընդմիջումներով էին լինում: Գրադ կայանը նորից լիցքավորելու համար քսան որպե է պետք: Ամեն հարվածից հետո մարդիկ գիտեին, որ 20 որպե դեռ ունեն. գնում ջուր էին բերում, այլ հարցեր լուծում:
Առհասարակ Ստեփանակերտի բարդությունները լրիվ ուրիշ էին: Մինչ Երևանում հացի հերթ էր, էստեղ մարդիկ հացը տանն էին թխում: Ուտելու խնդիր պրակտիկորեն չկար, քանի որ քաղաքում գրեթե մարդ չկար, որ գյուղում բարեկամ չունենար: Երևանում շատերը չգիտեին՝ գյուղն ինչ բան է: Բայց այստեղ էլ երեխաներով, ամեն մեկս մի կացին վերցնելով, գնում էինք անտառ, ամբողջ հարևանության համար փայտ ջարդում կամ օրինակ՝ գնում էինք աղբյուրից ջուր բերելու: Այդ երկու իրականությունները զուգահեռ ապրում էին մտքումս: Ընկերներս շատ էին սիրում, երբ գնում էի էստեղի սովորած բակային խաղերը Երևանում սովորեցնում, նույնն էլ հակառակը: Ստեփանակերտի երաժշտություն սիրող ընկերներիս Երևանից հետաքրքիր բաներ էի բերում:

«Ուրալով»՝ Գանձասար
Գանձասարում ամեն կիրակի պատարագ էր լինում, բայց քանի որ շատ քիչ մարդ էր էնտեղ մնում, «Ուրալով» երգչախմբին տանում էին Գանձասար, նրանք երգում էին ու նույն ձևով վերադառնում քաղաք: Մամաս էլ էր երգում, ու ես իրենց հետ միշտ գնում-գալիս էի: Փոքր երեխայի համար այնտեղի կյանքը շատ հետաքրքիր էր:

← *«Իմ ու Ստեփանակերտի վերջին լուսնյակ գիշերը: Հաջորդ օրվանից երկուսիս գլխին էլ մառախուղ իջավ: Դեռ մեջն ենք: Էսօր Լուսինը հայտնվեց». նկարը ստեղծվել է հոկտեմբերի 8-ին, խմբագրվել հոկտեմբերի 30-ին, 2020*

→ Լրագրողները Ստեփանակերտի Samra ռեստորանում՝ 44-օրյա պատերազմի ժամանակ

↓ Բլոջիկները՝ Բերձորի մոտակայքում

Լուսին
Հրադադարի մասին համաձայնագրի ստորագրման հաջորդ օրը՝ նոյեմբերի 11-ին, գնացինք Ստեփանակերտ: Քաղաքը մշուշի մեջ էր, փողոցները դափ-դատարկ: Ես չտեսա ավերված քաղաք, փոխարենը՝ սասանված հավատով Ստեփանակերտ: Այդ մշուշն եմ լավ հիշում: Արցախցին, իմ տպավորությամբ ու կարծիքով, երբևէ չի հանձնվել, իսկ այդ պահին մի ակնթարթ կարծեցի՝ հույսը հատել է: Բայց նույն երեկոյան գնացինք Արեգի ծնողների տուն: Մարդիկ սեղանի շուրջ նստած խմում էին, խորոված կար, կարտոֆիլ, զրույցներ, ծիծաղ, բայց և անդրադարձ անցած-դարձածին: Երևի կարող եմ բացատրել այդ պարադոքսը, հերքումը, հույսն ու ցինիզմը, բայց երբ իրականության մեջ առճակատվում ես դրա հետ, սկսում ես ինքդ քեզ հարցնել՝ իրականությունը սա՞ է, թե՞ այն, որում ես եմ ապրում:
Հաջորդ օրը սկսեցի պնդել, որ Արեգն ինձ ճանապարհի Երևան. ծանր էր ինձ համար իմ սեփական հավատի փլատակների վրա: Լավ հասկանում էի, որ հուսահատությունն իմ մեջ է: Դեկտեմբերին նորից գնացինք Արցախ: Օկուպացված տարածքներից քաղաք տեղափոխված մարդիկ Ամանորին էին պատրաստվում, կրպակները՝ լի: Հասկացա, որ Ստեփանակերտն ինձ համար հուսահատության ու մեծ հույսի խաչմերուկն է: Իմ ներսի հուսահատության ու իրենց չպրծնող հույսի:

Առհասարակ կյանքն աշխույժ էր: Թատրոններում անընդհատ ներկայացումներ էին խաղում: Սամվել Բաբայանը հերթով բոլոր ռուսական աստղերին բերում էր ստադիոնում ելույթ ունենալու: Ալեգրովայից սկսած՝ բոլոր հայտնի դեմքերը մեզ մոտ երգել են: Երբ վերջնական տեղափոխվեցինք Ստեփանակերտ, ավելի շատ խորացա տեղի կյանքի մեջ: Մինչև ավարտական դասարանները համար 1 դպրոցում էի սովորում, իսկ հետո գնացի հետ՝ Երևան՝ համալսարան ընդունվելու: Հետո եղավ բանակը, ու քանի որ այդ տարվա զորացրումն ուշ եղավ, չհասցրի դասերի գնալ ու մի տարի անցկացրի Արցախում: Համալսարանն ավարտելուց հետո վերջնական տեղափոխվեցի ու մինչև 2018 թվականն ապրեցի Ստեփանակերտում:

Լվացքի խորհուրդը
Ստեփանակերտն իր տեսակով առ այսօր հա՛մ շատ քաղաք է, հա՛մ գյուղի ջերմությունն ունի, որը մեծ քաղաքներում կորսված է. մարդկանց հարաբերությունները լրիվ ուրիշ էին: 2000-ականների սկզբում մեծ եկեղեցու կողքի բակերից մեկում հավաքվում էր քաղաքի ինտելեկտուալ ջահելությունը: Մեծ մասը ռուսական կրթություն ուներ, հավես դեմքեր էինք: Ամբողջ գիշեր նստում, մինչև առավոտ խաղեր էինք խաղում, սամավարով թեյ խմում, որը մինչև հիմա բակային մշակույթի կարևոր մաս է: Լվացքների մասին էլ չեմ ասում. դա առանձին գիտություն է: Գույնը, չափը, կիրառությունը, չորանալու արագությունը, ամեն բան հաշվի են առնում: Մի քանի տարի առաջ հետաքրքիր լուսանկար էի արել: Պատուհանից զինվորականի հագուստ էր կախված ու 20-ից ավելի սպիտակ ներքնաշապիկ:
Պատերազմի օրերին էլ մի կնոջ էի նկարել, որը ռմբակոծությունների ընթացքում լվացք էր կախում: Երկար անձրևից հետո, եթե մի օր արև է լինում, Ստեփանակերտի ամբողջ լվացքը պատուհանից դուրս է թռչում, ու այ էդտեղ հասկանում ես, որ լվացքը կյանքի խորհուրդն է: Կարծես մարդիկ նախապես իմացել են, որ հենց այդ պահին արև է լինելու:

Սյուռ
2010-ին «Պիտաչոկը» քաղաքի էպիկենտրոնն էր: Մի քիչ վերև՝ սեփական տներից մեկում, կով էին պահում, որը երեկոյան ժամերին միայնակ զբոսանքի էր դուրս գալիս ու հայտնվում հրապարակում: Դրա պատճառով մի պահ արգելել էին քաղաքում ընտանի կենդանիներ պահել, մարդիկ էլ սկսեցին ուղղակի բաց թողնել իրենց կովերին, միևնույն է՝ հետ էին գալիս տուն, բայց քանի որ դրանց հետ չոբան չկար, ոչ ոք չէր էլ իմանում, թե ում կովն է:
Երեխաները ռազմամթերքով էին խաղում: Ինքնաշեն ատրճանակներ էինք սարքում՝ զուգարանի դռան փականից՝ AK-ի փամփուշտներով կրակող: Իսկ մի անգամ կինոթատրոնում դիմացիս շարքում նստած տղան իրական ատրճանակով մեկ ուրիշի ոտքին կրակեց: Ֆիլմը դադարեցրին, վիրավորին հանեցին ու ֆիլմը շարունակվեց:
94-ի Նոր տարուն երեխեքով իջել էինք «Պիտաչոկ», բոլորն իրենց պատուհաններից օդ էին կրակում բոլոր հնարավոր զենքերով, վերջում էլ Ձմեռ պապին ծեծելով հասցրին Կառավարության շենքը՝ նվեր չտալու համար: Կովբոյական կինո էր հիշեցնում. հա՛մ ծիծաղներս էր գալիս, հա՛մ խղճում էինք Ձմեռ պապին: Մեր կենդանաբանական այգին էլ քաղաքի գերեզմանոցի մուտքի մոտ էր: Այնտեղ մեկը գրաված տարածքներից բերված ուղտ էր կապել: Դասից փախնում էինք դրան նայելու, կամ էլ գնում էինք 10-րդ դպրոցի ետևի մանկապարտեզ, որտեղ գերիների էին պահում: Գնում նայում էինք, քարերով խփում պատուհաններին: Էդ տարիներին մարդիկ կային, որ թուրք գերիների էին պահում: Մեկի եղբայրը կամ տղան թուրքերի մոտ էր գերի, իրանք էլ թուրքին պահում էին, որ փոխանակեին, բայց ընթացքում որպես բանվոր աշխատացնում էին:

Բլօջիկները
Բլօջիկներին սկսեցի նկարել Երևանում, բայց Ստեփանակերտ էլ շուտ հասան: «Բարդակ» փաբի սեղաններին, քաղաքի տարբեր մասերում, Արցախ բերող նոր ճանապարհին էլ եմ նկարել, որ եկողների համար շատ վախենալու չլինի: Պատերազմի ժամանակ արկերի վրա էի նկարում ու էլի խառը տեղերում: Բլօջիկները միշտ չի, որ բոլորի կողմից հասկացվել են: Մի շրջան որոշ մարդիկ տարածում էին, թե թուրքերի պատվերով նկարած բան է, կամ հենց իրենք էլ եկել նկարել են: Դե, որոշ տեղերում էշ էի նկարում ու լուսին: Մի երկու անգամ ստիպված եմ եղել մարդկանց բացատրել, որ սուտ է, որ իրականում էշը ես եմ, լուսինն էլ կինս է՝ Լուսինը: Տենց մի անգամ Արտակ Բեգլարյանը զանգեց, ասում է՝ էս-էս վայրի քաղաքապետարանում եմ, բարձրախոսի վրա դնեմ, ասա, որ դու ես նկարել:

Լիզելով վերքերը
Ստեփանակերտը մանկությունս է. շատ մեծ փորձ եմ էստեղից ստացել, որն աշխարհի որևէ ուրիշ կետում անհնար կլիներ գտնել: Քաղաքի փոքրությունը հա՛մ լավ էր, հա՛մ վատ: Տպավորություն էր, որ ամեն ինչ էստեղ ճանաչում եմ, ամեն բակ, անկյուն: Երևանը հիմա էլ այդքան չեմ ճանաչում:
Ստեփանակերտը հետաքրքիր ռեգեներատիվ հատկություն ունի: Արագ իր վերքերը լիզում-բուժում է: Նման չի պատերազմով անցած քաղաքի: Կռվի ժամանակ միջազգային լրագրողները դժգոհում էին՝ իմանում ենք մի տեղ ռմբակոծություն է եղել, մինչև գնում-հասնում ենք տեղ, արդեն ամեն ինչ մաքրած-հավաքած է:

← «Մենք ենք» ցուցահանդեսի համար արված ազդագիրը, 2020 թ.

Մարգարիտ Միրզոյան
Արեգ Բալայանի արխիվից

Անդադար աշխատող շարժիչ

Ստեփանակերտի բնավորությունը, խարտարապետությունն ու քաղաքաշինական իրավիճակը՝ ըստ խարտարապետ Մանուշակ Սիրականյանի, որն արդեն երեք տասնամյակ ապրում ու աշխատում է Արցախի մայրաքաղաքում:

Փոքր կանաչ քաղաքը

Արցախ առաջին անգամ եկա 1989 թվականին: Հուշարձանների վերականգման մեր գրասենյակը Ստեփանակերտում արվեստանոց էր բացել ու մի քանի հոգով տեղափոխվեցինք այստեղ աշխատելու: Քաղաքի օժանդակ դպրոցի կացարանում մեզ բնակարան տրամադրեցին: Ներքևի հարկում աշխատում էինք, վերևում՝ քնում: Հետո բոլորը վերադարձան, իսկ ես մնացի:

Ստեփանակերտը շատ լավ քաղաք էր՝ կանաչ, փոքր, իր ամփոփ բնակչությամբ: Այդ չափի քաղաքներին բնորոշ կերպով բոլորը միմյանց ճանաչում էին: Խանութները հիմնականում դատարկ էին, բայց որակյալ թելեր էին վաճառում, ու քանի որ սկզբնական շրջանում ծանոթներ քիչ ունեի ու առանձնապես ժամանցի տարբերակները շատ չէին, անվերջ գործում էի:

Ընդհանուր միրքը

Այդ տարիներին Ստեփանակերտն ավելի միակուռ քաղաք էր թվում, տիպիկ սովետական ոճի: Այն հիմնականում ձևավորվել էր 20-րդ դարում: 19-րդ դարից էլ շենքեր կային պահպանված, բայց դա չէր խանգարում, որ քաղաքն ընդհանուր դեմք ունենար:

Այսօր պատկերը մի քիչ այլ է, մայթերից որոշներն առգրավված են ինչպես և շատ քաղաքներում, անճաշակ կամ ճաշակով կցակառույցներ են ավելացել, որոնք, ըստ իս, Ստեփանակերտին պետք չէին: Քաղաքը որոշակի առումով կորցրել է իր ընդհանրականությունը, ցրվել է իր ճաշակի ու մտքի մեջ: Այն ժամանակ Ստեփանակերտի ամենահայտնի փողոցները, օրինակ՝ Թումանյանը կամ Մարտունու փողոցը, թեև լավ վիճակում չէին, ամբողջը ցեխ էր, ասֆալտ չկար, բայց նույնիսկ այդ տեսքով երևում էր, որ միասնական

մտահղացում է ներդրված: Այսօրվա Ստեփանակերտին նայելով հասկանում ես, որ մասնավորն ավելի ուժեղ է, քան պետությունը: Երբ Կառավարության շենքի դիմաց ավելի բարձր շենք է կառուցվում, ուժային հարաբերակցությունը պարզ է դառնում: Երբ տեսնում ես, որ մայթի վրա շինություն է տեղադրվում, հասկանում ես, որ մասնավորը նաև խլում է հասարակության տարածքը, ուրեմն վերջինս լավ վիճակում չէ:

Ստեփանակերտի գույնը

Ես Ստեփանակերտին կանաչ ու դարչնագույն եմ ընկալում: Երբ նոր տեղափոխվեցի այստեղ, քաղաքի մեծ մասն այդ գույների մեջ էր. շենքերն Ադրբեջանից բերված ազլայլ քարով էին երեսպատում, որը հենց այդ երանգն ուներ: Քաղաքում Երևանից բերված տուֆից կառուցված մի քանի շենքեր կտեսնեիր: Մի պահ սկսեցին մարմարով երեսպատել շենքերը: Այսօր շենքերից շատերն արհեստական ալիկաբոնդերց սալիկներով են պատված ու դա Ստեփանակերտին միայն վնասում է: Բայց ես աշխատում եմ չտեսնել վատը, մեջս ֆիլտր կա, գիտեմ, որ վատը կա, բայց չեմ ընկալում: Ուսանողներիս սովորեցնում եմ կառուցել մարդու համար, ճանաչել սեփական էկոհամակարգը, որի համար ապագայում կառուցելու են, բայց և ուսումնասիրել ու սիրել աշխարհը:

↓ Մանուշակ Սիրուանյանը որդու՝ լուսանկարիչ Արեգ Բալայանի հետ

Քաղաքաշինությունը մեզ տալիս է ամենահիրական պատմությունը: Դրանով կարելի է պարզել մարդկանց միջև, մարդու և Աստծո, մարդու և հասարակության միջև հարաբերությունները:

Շարժիչ

Ստեփանակերտն ինձ համար քեֆչի է, բայց խոսքը ջրիկության մասին չէ: «Քեֆ անողի քեֆը չի պակսիլ» հեքիաթին շատ է նման: Երբ պատերազմը նոր էր ավարտվել, հենց հաջորդ ամռանը մեր տան մոտի ռեստորաններից մեկում խնջույք էր: Ձայներն այնքան բարձր էին, ստիպված գնացինք տեսնելու, թե ինչ է կատարվում: Մասնակիցներից մեկին ասեցի՝ տեղյա՞կ եք, որ պատերազմ է եղել, էս ի՞նչ եք անում: Պատասխանեց՝ հա, ի՞նչ, թող Շուշիից տեսնեն, սրտները ճաքի: Սա բոլոր արցախցիներին բնորոշ զիծ է: Նրանք կյանքը շատ են սիրում, համառորեն կապված են իրենց հողին, կյանքից հաճույք են ստանում ու պատրաստ են դրա համար կռիվ տալ ու նույնիսկ զոհվել: Բայց միևնույն ժամանակ կյանքը շատ են սիրում, այն իրենց համար տոն է:
Մենք Շուշին անվանում ենք մշակութային մայրաքաղաք, այդ դեպքում Ստեփանակերտը մշակույթին ծառայող քաղաքն է: Մենք սովորաբար տեսնում ենք ծաղիկը, հիանում իր գեղեցկությամբ, բայց ցանկացած ծաղիկ ունի ցողուն ու արմատ, որը նրան սնուցում է:
Եթե չլինի Ստեփանակերտը, ոչինչ էլ չի լինի, այն անդադար աշխատող շարժիչն է:

Եկողին

Երբ նոր էի տեղափոխվել Արցախ, բոլորը ասում էին՝ ո՞ւր ես գնում, վտանգավոր է: Ես էլ պատասխանում էի, որ Երևանում մայթի մոտ կանգնելը կարող է ավելի վտանգավոր լինել, քան Ստեփանակերտում ապրելը: Ցավոք, շատերին, եթե ասեն, որ ամեն ինչ հանձնելով հանգիստ կապրեն, նրանք դա կանեն, քանի որ իրական աշխարհի հետ կապը վաղուցվանից կորցրել են: Առողջ, մտածող մարդիկ գալիս են Արցախ, նույնիսկ արտասահմանցիները մի հնար գտնում են ու գալիս: Արցախում, Ստեփանակերտում կյանքը շարունակվում է, մարդիկ աշխատում են, երեխաները ծնվում են, գնում են դպրոց: Ուստիկաններն առավոտյան կանգնում են դպրոցների մոտ և ապահովում այդ երեխաների անվտանգությունը: Անգամ իրենց եմ սիրում առավոտյան ժամերին: Կյանքը շարունակվում է, դա շատ կարևոր է, և ոչ միայն մեզ համար: Մենք այստեղ ապրում ենք նաև Երևանում կամ արտերկրում ապրող մեր եղբայրների համար:

Մարգարիտ Միրզոյան
Արեգ Բալայան

Պատերազմ ու գինի

ԽՄԷ գինիների համահիմնադիր Էմմա Հարությունյանը պատմում է իր և իր գործընկերների՝ Արցախում գինեգործությամբ զբաղվելու անջնական փորձի մասին:

Ուզում եմ գինի արտադրենք

ԽՄԷ-ն Արցախի հանդեպ սիրո պատմություն է՝ հյուսված հույսերից, ընկերությունից, մարդկանցից, հոգնած աչքերից, խաղողի հյութից սևացած ձեռքերից, գիտելիքից, փորձարկումներից և անտրտունջ աշխատանքից:

Արցախում որևէ գործունեություն ծավալելը հիմնական իմաստավոր մտքերից մեկն էր արդեն երկար տարիներ: Մեր թիմի անդամներից երեքն էլ հատուկ կապ ունեն Արցախի հետ. Դիման տասնհինգ տարուց ավելի ուսումնասիրում է Արցախի ամեն անկյունը, ես ծնունդով Արցախից եմ, Դավիթը ծնվել, ապրել և ապրելու է Արցախում: Դժվար է այս անտառներն ու սարերը ճանաչելուց հետո այն չսիրել և չփորձել իր մասին պատմել աշխարհին:

Մեր պատմությունը բույրերով և համերով է մոտեցնում Արցախին, քանի որ գինին իր մեջ է ներքաշում հողի և այն պատրաստող մարդկանց բնավորությունը: Հաճախ ենք հանդիպում կարեկցող կամ անգամ այլայլված հայացքների կամ խոսքերի, որոնք փորձում են հասկանալ Արցախում գործունեություն ծավալելու նպատակները: Եթե մի կողմ թողնենք կապվածությունը, սերն ու հիացմունքը, ապա կա այլ դրդապատճառ. այստեղ մենք գտնում ենք, որ մեր աշխատանքն իմաստ ունի: Արցախում մարդիկ սպասում են ներգրավվածության և շնորհակալ են միասին աշխատելու որոշման համար: Գուցե որևէ մեկին տարօրինակ թվա այն, որ կասկածները երբեք չեն զբաղեցրել մեր միտքը, քանի որ դժվար է բացատրել այն զգացմունքներն ու վստահությունը, որը ճանաչելուց հետո է պատահում: Ուստի կարող ենք բոլոր կարդացողներին և երկմտողներին խորհուրդ տալ գալ մեզ մոտ, հյուրընկալվել փոքրիկ, բայց գինու պատրաստման համար մտերմիկ ու մտածված միջավայրում, խմել մի բաժակ գինի, շրջել տարածքում, և դուք ամեն ինչ կհասկանաք:

Այլ իրականություն

ԽՄԷ-ի պատմությունը սկսվեց, երբ Հայաստանում և Արցախում մարդիկ այսքան հոգսեր չունեին, երբ կար այլ իրականություն՝ 2019 թվականին:

— Ուզում եմ գինի արտադրենք, նարնջագույն գինի*,– հարցերի և բացատրությունների պատրաստ, զննող ու զգույշ հայացքով ասաց Դիման:

— Եթե պատրաստ ես աշխատել, արտադրենք,– ասաց Դավիթը՝ խաղողի ու գինու լեզուն առանց բառարանի հասկացող գինեգործը:

Որոշումն ու ցանկությունն ավելի առաջ ընկան մտածված քայլերից, բիզնես պլաններից, գործընկերային հարաբերությունների քննարկումից: Ոչինչ չի կարող կանգնեցնել մարդկանց, որոնք անհանգիստ են, պրպտող և անընդհատ նոր մտքեր ունեն:

Քո առաջին հեղինակային գինու համը փորձելն անբացատրելի թրթիռ է, անհավանական է թվում, որ դու բաժակի մեջ ունես մի խմիչք, որը քո պատմության մի մասն է: Այս զգացողությունը պարուրում է և վերջնականապես ստիպում մնալ գինու աշխարհի դյութիչ գրկում:

Հետո որոշեցինք, թե ինչպես կոչել մի բան, որի համն արդեն գիտեինք: Ի դեպ, սա երեխային անուն տալու նման է. կան ընտանիքներ, որտեղ անգամ փոքր տարիքում գիտեն ինչ անուն են ունենալու իրենց երեխաները: Կան այլ տեսակի ծնողներ, ովքեր տեսնում են երեխային և հասկանում՝ նրան ինչ անուն կհամապատասխանի: Մեր տարբերակը երկրորդն էր: Բազմոցին նստած՝ անհամբեր և շատ անուշ ապրումներով հնչեցնում էինք հարյուրավոր բառեր, վիճում, զարմանում, թե ինչպես դիմացինն ի վիճակի չէ հասկանալ մյուսի մտքի սրընթաց թռիչքը, և, ի վերջո, ինչ-որ վայրկյանի հնչեց ԽՄԷ-ն: Այն այնքան բնական և ճիշտ է նկարագրում գինին, Արցախը, մեր ունեցած փորձը, այն պատրաստող մարդկանց, միջավայրը, որտեղ նա ծնվել է: Գինին առաջին կումից անմիջական է, շատ բաց և կենդանի, բայց նաև մի քիչ ուղղախոս և առանց սեթևեթանքի, առանց դուր գալու ցանկության: Ուրեմն ... ԽՄԷ:

* *Նարնջագույն գինին պատրաստվում է սպիտակ խաղողից, բայց կարմիր գինու տեխնոլոգիայով, այսինքն՝ կեղևի հետ միասին:*

Կարասներ

Երբևէ մտե՞լ եք մի նկուղ, որտեղ հաստատ գիտեք, որ կարող եք շատ անսովոր պարագաներ գտնել, բայց դա անհնար է թվում բազմազան իրերի քանակության և մարդու ձեռք չտեսած, տարիների փոշու շերտի տակ: Մենք, սակայն, գիտեինք՝ ինչ ենք գտնելու այդ վախեցնող մոխրագույն ծածկոցների ներսում... կարասներ, կավե, պինդ, իրենց մեջ տարիներ շարունակ գինու խմորումը զգացած, պատմական ցնցումներ և, բառացիորեն, աշխարհակարգերի փոփոխություններ տեսած, բարձր, ձվաձև կարասներ: Նրանք արդեն տարիներ է, ինչ լքված էին, կամ ավելի շուտ՝ կիսալքված, քանի որ ամեն տանը գոնե մեկը կար, ով հիշում էր, թե ինչպես էր կարասը ծառայում իր բուն նշանակությանը, և դա ընտանիքի բոլոր անդամներին դրդում էր հոգատարության:

— Տատի ջան, իսկ դուք հիշո՞ւմ եք ժամանակները, երբ կարասի մեջ գինի էր սարքվում:

— Հիշում եմ, բա ոնց, կեսրայրս ինձ շատ էր սիրում, հենց կարասը բացում էր, առաջին բաժակից ես էի փորձում: Որ հավանում էի, բոլորին լցնում էր: Բայց մի անգամ ամբողջ կարասի գինին թափեց, թթվել էր:

— Իսկ այս ի՞նչ թիվ է՝ 1881, պատրաստման տարեթի՞վ:

— Չէի էլ տեսել, գիտեմ, որ շատ հին է, կեսրայրս պատմում էր, որ դեռ երեխա ժամանակ մտնում էր, կարասը մաքրում:

Այսպես մանր-մանր, նոստալգիկ խոսակցություններով, կարասները լավ պահելու խոստումներով և արդեն բարեկամական գրկախառնություններով հավաքագրեցինք մի դարից ավել պատմություն ունեցող կարասները: Բավական ծանր գործ է վերջիններիս տեղափոխելը. այն իր լեզուն ունի: Էլ չասեմ, որ որոշ կարասներ իրենց բնակության հասցեից Արցախ տեղափոխելու համար կարիք է եղել բառացիորեն պատեր քանդել, քանի որ դրանք ավելի երկար են կանգնած եղել իրենց տեղում, քան տան որոշ պատերը:

Կարասների վերակենդանացումը տանջանքի առանձին ժանր է: Ինֆորմացիայի բացակայության պայմաններում, երբ ոչ ոք չի կարող խորհուրդ տալ, թե ինչպես ազատել կարասներն անպիտան մասնիկներից, գինու մնացորդներից, և Դիոնիսոսը գիտի, թե էլ ինչից, սկսվեցին մեր՝ մոխրոտիկի արկածները: Անկեղծ ասած, անհավանական էր թվում այս ծերունի կարասներին նոր կյանք հաղորդելը, բայց, ի վերջո, նրանք շնչեցին: Նրանք շնչեցին, ու երբ գինին արդեն կարասներում էր, բոլորի սրտերը մի օրում դադարեցին զգալ, ամբողջ ամառ և մի սեպտեմբեր տևած գինու էյֆորիան լռեց: Այնքան են խոսել մարդիկ սեպտեմբերի վերջից չորրորդ օրվա մասին, որ դժվար է կիսել զգացմունքներ, կամ անգամ հուզական հայացքով լսել կամ կարդալ ապրումների մասին: Բայց մի քանի օր հետո, երբ արդեն անդառնալի աղետը դարձավ նոր նորմա, ես հասկացա, որ գինին, միևնույն է, գեթ մի ակնթարթ չկանգնեցրեց իր խմորումը, չդադարեց նոր համեր ստանալ, չլռեց զոռացող ազդանշանների ներքո: Ի զարմանս մեզ բոլորի՝ գինին ապրեց, չնայած մնացել էր առանց գինեգործի հսկողության:

2020-ի աշուն

Ասացի, որ ԽՄԷ-ն ընկերության պատմություն է, և ասեմ ինչու: Գինին ամենաշատ խնամքի կարիքն ունի առաջին շրջանում, որը 2020 թվականին համընկավ չարաբաստիկ ամիսների հետ: Ամեն օր պետք է ուշի ուշով

Դերերում՝

Դիմա – *Արցախի գրեթե բոլոր հայկական կամ անհայկական կածաններով անցած ճանապարհորդ: ԽՄԷ-ի հեղինակ, մշակութային մարդաբան:*

Դավիթ – *գինեգործ, ընդգծված արցախցի, ում հոգին և բնավորությունը ԽՄԷ գինիների մեզ է:*

Էմմա – *արվեստաբան, որը ԽՄԷ-ին նայում է մշակութային պրոդուկտի տեսանկյունից: Թխի, գործարանի և, ընդհանրապես, ԽՄԷ գինու շուրջ հայկական միակ կինը:*

հետևել և չլքել այն գեթ մեկ օրով, քանի որ հարյուրավոր գործընթացներ են կատարվում խմորման ընթացքում գտնվող խաղողի հյութի մեջ: Հպարտությամբ եմ գրում, որ այդ շրջանում Դավիթն ավելի շատ երկրի պաշտպան էր, քան գինեգործ: Ուստի գինու մասին մտածելն այդ իրավիճակում իսկապես անիմաստ էր թվում: Բայց, միևնույն է, արկերի «բատմինտոնի» ձայների ներքո, երբեմն երբ պայթյուններից ավելի վախեցնող լռություն էր տիրում, գինու գործարանի մոտ հայտնվող ընկերները ստանում էին հեռախոսային հրահանգներ և տարիներ շարունակ իրենց աչքի առաջ կատարվող գործողությունները նմանությամբ և պատասխանատվությամբ կրկնում ինքնուրույն: Այնպես որ՝ 2020 թվականի ԽՄԷ-ի վրա մի ամբողջ ընկերական կոլեկտիվ է աշխատել՝ գուցե և այդ ընթացքում որոշ ժամանակով մոռանալով շուրջ բոլորը տիրող տոտալ խառնաշփոթի մասին:

Շարունակություն

Հիմա արդեն երկու տարի է անցել այս դեպքերից, բայց կարծես սա վերջին բանն է, ինչ արժի պատմել ԽՄԷ-ի մասին: Մենք այսպես չէինք երազում գրել մեր մասին, սա չպետք է լիներ մեր պատմությունը: Սակայն գինին մեզ սովորեցրեց, որ անգամ ամենածանր պայմաններում կյանքը շատ բանալ, շատ սառնասիրտ շարունակվում է: Բնությունը մեզ ամեն տարի նոր որակով, նոր հատկանիշներով խաղող է հրամցնում, ու չի դադարում ցանկությունն անվերջ փորձարկումներ անելու, թեկուզ մի քիչ հասկանալու գինու աշխարհը:

2022, մենք նորից նույն գործին ենք, խաղողը հավաքվում է, ճզմվում, խառնվում, սառեցվում-տաքացվում, համտեսվում: Շարունակվում է կյանքն Արցախում, Հայաստանում, և մենք ոչ մի այլ տարբերակ չունենք: ԷՀ:

Էմմա Հարությունյան
ԽՄԷ

Արցախ

Նրանց արմատներում առաջին հայացքից Արցախ տանող ոչ մի թել չկա, կյանքի նախնական սցենարներում չէր էլ ենթադրվում, որ մի օր իրենց կյանքը չեն պատկերացնի առանց այս հողի: Մեկ անգամ այցելած ու մեկընդմիշտ ճակատագիրն Արցախի հետ կապած մարդիկ պատմում են՝ ինչպես սիրահարվեցին մեր մեծ հայրենիքի այս փոքրիկ, բայց կարևորագույն կետին:

Արիպա Սիսակյան

Արտյոմ Աբրամյան



Մի կաթիլ մեղր

Թումո Ստեփանակերտի ուսանող Ալիսա Հարությունյանը Արամ Կիրակոսյանի դասընթացի երրորդ մակարդակում «փորփրել է» մեղուների փեթակն ու ստեղծել այս ֆոտոպատմությունը:

Կերպարներ

Ինչ է գալիս մտքներիդ, երբ լսում եք կերպար բառը: Թումո Ստեփանակերտի նկարչության առաջին մակարդակի դասընթացին Նարեկ Բարսեղյանի ուսանողները նկարել են այս երևակայական և մեկ-մեկ էլ վախեցնող կերպարները:

Փետրվարը Ստեփանակերտում

Վարո Ռաֆայելյանի լուսանկարչության դասընթացի արցախցի ուսանողները շրջել են ձմեռային Ստեփանակերտով ու որսացել քաղաքի ամբողջ գեղեցկությունը:

Սեդա Բալայան



Բելլա Դավթյան



Մարիկ Օհանջանյան

Նորա Գիլորյան

Էլա Աստրյան

Բելլա Դավթյան

Ժենգյալով հաց

Արցախը խորհրդանշող ուտեստի՝ ժենգյալով հացի բաղադրիչներն այնքան շատ են ու բազմազան, որ դրանցից գլուխ հանելու համար Թումո Ստեփանակերտի ուսանողները Սեդրակ Մկրտչյանի օգնությամբ ստեղծել են այս խոսուն ինֆոգրաֆիկան:







Մենք ենք մեր սարերը

Ծանրագույն կորուստներից հետո չպարտված ու չընկճված արցախցուն միշտ ուժ է տալիս «Մենք ենք մեր սարերը» կոթողը, որը հաստատակամ ու ամուր կանգնած է մայր հողի վրա: Քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի որդին՝ հոր մասնագիտական ձիրքն ունեցող Աշոտ Բաղդասարյանը, պատմել է իր հուշերն ու կոթողի մասին մանրամասներ ներկայացրել:

→ Աշոտ Բաղդասարյանն արվեստանոցում

«Ուղղակի կոթող չէր, մի մեծ պատմություն էր»

Երբ նա կերտում էր իր նշանավոր քանդակը, մտքովն անգամ չէր անցնում, որ այն կդառնա Արցախի խորհրդանիշը, իսկ ավելի ուշ տեղ կգտնի հանրապետության զինանշանի վրա: «Դեդա-բաբոն» կամ, ինչպես ճիշտ է անվանել՝ «Մենք ենք մեր սարերը» կամ «Ղարաբաղցիներ» կոթողը, պատվանդան չունի: Հայրիկը նպատակ ուներ ցույց տալու, որ կոթողն անմիջապես հողից է սկիզբ առնում՝ ծնվում է ու շարունակվում հողի վրա ամուր կանգնելու համար:

Հայրս, ծնունդով լինելով արցախցի, անդրադարձել է Արցախի թեմային և 1965 թվականին իտալական Կարարայում տեղի ունեցող քանդակի միջազգային ցուցահանդեսին ներկայացել այս քանդակի ցուցահանդեսային տարբերակով: Քանդակն ալյումինից էր ձուլել, որպեսզի ճանապարհի համար ծանր չլինի: Կարարայի ցուցահանդեսից հետո նա որոշում է Արցախում տեղ փնտրել՝ արձանի մեծ տարբերակը կանգնեցնելու համար: Եվ իր ընտրությունը կանգ է առնում Ստեփանակերտի մուտքի բլուրներից մեկի վրա: Արձանի ցուցահանդեսային տարբերակը բավական տարբերվում էր Ստեփանակերտի բլրի վրա կառուցված «Մենք ենք մեր սարերը» կոթողից, չնայած կոմպոզիցիայով նույնն են. երկու դեպքում էլ գլուխները հիշեցնում են մեծ և փոքր Մասիսները: Քանդակի սիմվոլը հայկական ավանդական ընտանիքի սկիզբն է: Բայց քանի որ դրվելու էր լանդշաֆտում ու բավական մեծ չափերով, պետք է լրիվ փոխվեր մոտեցումը: Ֆորմաները պետք է ավելի հստակ լինեին, հեռվից կարդացվող: Ու դրա համար նա որոշեց արձանը կերտել տուֆից:

↓ «Մենք ենք մեր սարերը» հուշարձանի սկզբնական էսքիզը

Հայրիկը չէր մտածում, որ այն ուխտատեղի պետք է դառնա. նախատեսված էր հեռվից նայելու համար: Եթե մտածեր՝ ուխտատեղի կդառնա, աստիճաններ ու հարմարավետություն կստեղծեր այցելուների համար: Չգիտեմ՝ նոր բարեկարգումները սրտով կլիներ, թե ոչ, բայց երևի իրեն էլ կհամոզեին, որ այդպես է լավ:

«Հուշարձանը հավաքական կերպար է. քանդակելիս ոչ մեկին չի նմանեցրել»

Տարբեր վարկածներ եմ լսել կոթողի մասին: Սկզբում ասում էին՝ իր տատիկին ու պապիկին է կերտել: Բայց հայրիկը հավաքական կերպար է ընտրել, հակառակ դեպքում կոթողը կկորցներ իր իմաստը: Ասում են՝ կոթողի տակ մարդիկ կան թաղված. դա էլ իրականությանը չի համապատասխանում: Ասում են՝ Բագրատ Ուլուբաբյանն (պապայի մոտ ընկերն էր) է կոթողի անվանումը տվել, թե ով է անունը կնքել. ոչ ոք, նույնիսկ ես չեմ կարող ասել:

«Կոթողը պայթեցնելու, ճակատին կրակելու փորձեր եղել են»

Աշխատանքը տևել է մոտ երկու տարի, ապա՝ 1967-ի նոյեմբերի 1-ին Ստեփանակերտի բլուրներից մեկի վրա կանգնեցվեց «Մենք ենք մեր սարերը» արձանը: Կոթողը պատրաստելու համար տուֆ քարը բերվել է Հոկտեմբերյանից: Ես 7 տարեկան էի, երբ նա քանդակում էր դրա աշխատանքային մոդելը, որ գիպսի նմուշը տանի Արցախ և չափերը ճիշտ վերցնի: Կարծում եմ՝ Կարարայի ցուցահանդեսից առաջ նա արդեն մտածում էր քանդակի մեծ տարբերակի մասին: Ի դեպ, հայրս է հետևել կոթողի շինարարական աշխատանքներին, իսկ շինարարական ձիրքերն իր հորից էր ժառանգել:

Կոթողի բացում հենց այդ շրջանում չի եղել. չէին ուզում շատ ուշադրություն գրավել: Պաշտոնական բացումը եղավ միայն 2014-ին: Վստահ եմ՝ հայրիկն ուրախ կլիներ տեսնել այդ օրը:

Հայրիկին առաջարկել էին կոթողի մեջ դատարկ թողնել, հետևից դուռ բացել: Իմաստն այդպես էլ չհասկանալով՝ մերժեց: Ամրության համար մեջը բետոն լցնել տվեց: Մի անգամ նկատել էինք, որ պայթուցիկ նյութի համար տեղ է փորված: Արձանի վրա «Գորշ գայլերի» գրություն էինք նկատել, ճակատին էլ կրակոցի հետքեր:

Շատ խնդիրներ կային. կոթողը, ըստ միջազգային հանրության ընկալման, Ադրբեջանի տարածքում էր կանգնեցվելու:

↑ Քանդակին վերջնական տեսքը տալիս

↑ *Սարգիս Բաղդասարյանն արվեստանոցում*



Պապայի կողմից մեծ համարձակություն էր Արցախում նման կոթող կանգնեցնելը: Սկզբից ասել էր, որ պատվանդան է դնելու և հայ-ադրբեջանական բարեկամությունը վկայող արձան է կառուցվելու: Ամեն մեկին մի բան էր ասում: Ի վերջո, նրանց մոտ էլ հարց ծագեց՝ ի՞նչ է նշանակում «Մենք ենք մեր սարերը», ո՞ւմ սարն է, ովքե՞ր են «ղարաբաղցիները»: Պապան հստակ պատասխան ուներ. ասել է «Ղարաբաղցիներ», հո ազգություն չի նշել, սարերն էլ ուղղակի սար են՝ տեղում ապրողների սարերը: Հետո տատիկի կերպարի տարազի խնդիրն առաջացավ: Ես ինքս եմ հիշում, որ Արցախում այդ շրջանում նման տարազ էին հագնում, դրան էլ «ղաբա» էին ասում: Մեր տանը դրանից կար, հետո պապան թանգարան հանձնեց:



↑ *«Ըմբիշները» քանդակի վրա աշխատելիս*

«Երբեք չէր մտածի, որ հենց այս աշխատանքն այսքան հնչեղություն կունենա»

Պապային երկու արվեստանոց էին տվել, մեկում աշխատում էր, մյուսը բնակարան էր դարձրել: Ես հետևում էի նրա գործերին այնքանով, որքանով արվեստանոցում եմ մեծացել: Նրա ստեղծած գրեթե բոլոր գործերին ականատես եմ եղել:

«Ղարաբաղցիները» ստեղծելու ժամանակ 8 տարեկան երեխա էի: Հիշում եմ՝ միշտ զարմանում էի, թե ոնց է միաժամանակ մի քանի քանդակի վրա աշխատում (մինչև հիմա էլ զարմանում եմ): Վստահ եմ՝ երբեք չէր մտածի, որ հենց այս աշխատանքն այսքան հնչեղություն կունենա, կդառնա պատմություն ու Արցախի խորհրդանիշ:

Ուրախ եմ, որ հայրիկն իր փառքը վայելել է: Գիտեր, որ մարդկանց մի մասը ճանաչում էր իրեն, ինչու մի մասը, որովհետև ո՞վ է հիմա ճանաչում քանդակների հեղինակներին: Այդ նրանք են առաքելության նման պատմություն ստեղծում, իրենք՝ թողնում, գնում...

Սարինե Մերուժանյան

Աշոտ Բաղդասարյանի արխիվ, Արմենպրեսս

Ստեփանակերտը պատերազմի ժամանակ, 1993 թ.

1993 թվականին Արցախյան առաջին պատերազմն արդեն թևակոխում էր եզրափակիչ փուլ: Մինչ հայկական ուժերը գրավում էին Քարվաճառը, Մարտակերտը, Աղդամն ու Ֆիզուլին, Ստեփանակերտն ապրում էր ռմբակոծության տակ. 1991-1994 թթ. ժամանակահատվածում միայն Ստեփանակերտի վրա ադրբեջանական բանակի կողմից արձակվել է ավելի քան 21.000 «Գրադ» տիպի հրթիռային արկեր, 2700 «Ալազան» հրթիռ, 2000-ից ավելի հրետանային արկեր, 180 զնդիկային ռումբ, 150 կեստոննայանոց ավիառումբ:

gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

evnmag.com
կարդայեք առցանց



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Մեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)